

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԹՈՒՆՈՒԶԻ ԴԵՍՊԱՆԸ



Երիտասարդու թեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան երէկ Թունուզ այցելելու հրաւեր մը ստացաւ Թունուզցի իր պաշտօնակիցէն՝ Ապտէլ Ռահիմ Զուարթին:

Հրաւերը փոխանցեց Լիբանանի մէջ Թունուզի դեսպան Մոհամէտ Ֆաթհի Հուալտի, որ յայտարարեց, թէ հրաւերին նպատակն է թափ տալ երիտասարդութեան մարզէն ներս երկու երկիրներու գործակցութեան եւ քննարկել այս իմաստով ստորագրուելիք համաձայնագրի մը նախագիծը:

Նախարար Յովնանեան հաստատեց, որ երկու երկիրներուն միջեւ մարզական եւ երիտասարդական գործակցութեան համաձայնագիր մը կարեւոր է եւ կարելի եղածին չափ մօտ ատենէն պիտի ստորագրուի անիկա:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ

ՆԱԽԱՐԱՐ ԸԱՄԱՏԵ ԿՍԱՆՇԵՑՈՒՑ, ՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՆՁՆԱՌՈՒ ԿԸ ՄՆԱՅ ԸՏՏԱՊԵՆԵԼՈՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ԸԱՐՑԻՆ ԼՈՒԹՈՒՄԸ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի, որ այսօր կը մեկնի Սէնտական Արաբիա, իսկ շաբաթավերջին՝ Ֆրանսա, երէկ ժողով մը գումարեց էլեւնուտքի նախարար Ֆուատ Սիհիորայի, գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համաւտի եւ Գաղթականներու Սնտուկի նախագահ Ֆատի Արամունիի հետ:

Ժողովէն ետք Համաւտի վստահեցուց, որ կառավարութիւնը յանձնառու կը մնայ հետապնդելու գաղթականներու հարցին լուծումը եւ սնտուկը պիտի շարունակէ գործել այս ուղղութեամբ:

Ան նաեւ յայտնեց, որ վարչապետին եւ էլեւնուտքի նախարարին հետ համաձայնագրի մը ստորագրումը կը թելադրուի:

Ինչ որ հետ համաձայնութիւն գոյացած է ամբողջացնելու գաղթականներու տունդարձի գործողութեան քաղաքական բաժինը, այսինքն՝ հաշտութիւնները եւ գրաւուած կալուածներու պարպումը, մինչ վերաշինութեան եւ նորոգութեան բաժինը պիտի շարունակուի նոր ժամանակացոյցի մը հիմամբ, որ պիտի ձեռնարկուի համաձայնաբար Գ. Կ. Սնտուկին հետ:

Հարցումի մը պատասխանելով, Համաւտ ըսաւ, որ եթէ հարցը միայն վարչական բնոյթ ունենար, ապա կարելի պիտի ըլլար այս տարի փակել պայման, բայց դրամական պայմանները եւ

պայմանները դժուարացնելու հրամայականը կը թելադրեն որոշ ուշացում:

Հարիրի երէկ նաեւ ընդունեց տնտեսական եւ ընկերային հարցերու խորհուրդի նախագահ Ռոմէ Նասասար, որուն հետ ընդունեց ընդհանուր տնտեսական վիճակը: Նասասար յայտարարեց, որ պահանջած է բարեփոխել խորհուրդի օրէնքը, որպէսզի ան կարենայ կատարել իր պարտականութիւնները:

Երէկ վարչապետին այցելեցին երեսփոխաններ ժըպրան Թոք եւ Քապալան Իսախուրի, նախկին նախարար Ասատ Ռըպբ եւ հայր Լուիս Ռիպան:

ՏԻԿԻՆ ԱՆՏՐԷ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ



Լիբանանի Առաջին Տիգինը՝ Անտրէ Լահուտ երէկ ընդունեց Պուրճ Համուտի քաղաքապետական խորհուրդի պատուիրակութիւն մը քաղաքապետ Անդրանիկ Մարրեանի գլխաւորութեամբ, որ շնորհակալութիւն յայտնեց Ամաւորի եւ Ս. Օնուրի առիթով Պուրճ Համուտի վարձարաններու աշակերտութեան համար քաղաքապետարանի կազմակերպած հանդիսութիւնը հովանաւորելուն համար:

Պատուիրակութիւնը նաեւ ներկայացուց ծրագիրներ, ինչպէս՝ տարեցներու մշակութային մարզական կեդրոնի մը հիմնումը:

ՆԱԽԱՐԱՐ ՀՐԸՐԱՌԻ ԵՒ ՆԱՍՐԻ ԼԱՀՈՒՏ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՉՕՐ. ՍԼԷՅՄԱՆԻ

Պաշտպանութեան նախարար Խալիլ Հըրաւուի եւ արդարադատութեան գերագոյն խորհուրդի նախագահ Նասրի Լահուտ երէկ այցելեցին քաղաքի ընդհանուր հրամանատար Վոր. Միքէլ Սլէյմանի, որ տարիներ ծառայած էր մէջընդմեջ իր տնտեսական իրաւունքները պատիւ Լահուտի, պիտուրական ընդհանուր դատախապութեան իր նոր պաշտօնին անցնելուն առիթով:

Չօր. Սլէյման այս առիթով արտասանած իր խօսքին մէջ դրուա-

տեց Լահուտի պիտուրական ատեանէն ներս գործունէութիւնը, յիշեցնելով, որ անոր հայրը՝ Վոր. Միքէլ Լահուտ վաստակաշատ գործիչ մը եղած է, իսկ անոր եղբոր՝ նախագահ Վոր. Էմիլ Լահուտի կը պարտինք բանակի վերականգնումը:

Ապահովութեան ուժերը դատական իշխանութեան հետ կը հաստատեն կայունութիւն եւ կը պաշտպանեն քաղաքացիներու իրաւունքները, ըսաւ ան, յիշեցնելով նախագահ Լահուտի այն

խօսքը, թէ ապատ, անկախ եւ անշահախընդիր դատական իշխանութիւնը կը պաշտպանէ օրէնքի եւ հաստատութեան պետութիւնը:

Լահուտ ըսաւ, որ տխուր կը բաժնուի պիտուրական ատեանէն, ուր երկարամեայ գործունէութիւն ունեցած է, եւ վեր առաւ հայրենիքն ու քաղաքացին պաշտպանող բանակին դերը:

Նախարար Հըրաւուի իր խօսքին մէջ դրուատեց դատաւոր Լահուտի գործունէութիւնն ու անկողմնակալութիւնը:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱԽՔ

«Ազդակ» ի յատուկ հրատարակութիւն: 496 էջ:

● Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեղար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:

ԳԻՆ՝ 15.000 Լ.Ո.

ԱՐԱՔԱԿԱՆ ԼԻԿԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ...

ՊԵՐՐԻԻ ԸՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի հետ տեսակցելէ ետք, Պուսա ըսաւ, որ վեհաժողովին թուականը վերջնական է եւ ոչ յետաձգումի, ոչ ալ ջնջումի նիւթ կայ:

Իրաքը հարուածելու սպառնալիքը վեհաժողովի գումարման թուականին չազդեր, այլ ընդհանուր արաբական աշխարհին վիճակին:

Վեհաժողովին կը սպասուի գորակցութիւն յայտնել պաղեստինցիներու կեցուածքին եւ իրաւունքներուն, ինչպէս նաեւ ընդդիմանալ որեւէ արաբական երկրի ուղղուած հարուածի կամ սպառնալիքի, ըսաւ ան, վերահաստատելով, որ վեհաժողովի օրակարգին շուրջ խորհրդակցութիւնները կը շարունակուին:

Թղթակից մը նկատելով

Չարուակուած Ա. Էջն

տուաւ, որ Եւրոպական Միութիւնը սպառնացած է խզել Իսրայէլի հետ առեւտրական յարաբերութիւնները, եթէ շարունակուին պաղեստինցիներու գէջ անմարգկային ոճիրները, եւ հարց տուաւ, որ արաբական վեհաժողովը ի՞նչ կրնայ որոշել այս առնչութեամբ: Պուսա մերժեց պատասխանել եւ դիտել տուաւ, որ վեհաժողովին կը մասնակցին արաբ նախագահներ, որոնց կ'իյնայ որոշում տալ:

Ան վերահաստատեց, որ շրջանային վիճակը գէշ է, եւ յոյս յայտնեց, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆատ ներկայ կը գտնուի ժողովին:

ՀԱՄՈՒՏԻ, ՍԱԼԱՄԻ ԵՒ ՀԱՐԻՐԻ ՍՕՏ

Մուսա ապա այցելեց

արտաքին գործոց նախարար Մամուտ Համմուտի եւ հանդիպումէն ետք ըսաւ, որ «վեհաժողովը յետաձգելու մասին յայտարարութիւնները շատ մեծ սխալ են»:

Միացեալ Նահանգներու կողմէ Հըզպալլայի ուղղուած ահաբեկչութեան ամբաստանութիւններուն գծով վեհաժողովին առնելիք կեցուածքին մասին Մուսա ըսաւ, որ Լիկան պարտաւոր չէ որդեգրելու որեւէ օտար պետութեան որակումները, եւ այս հարցին գծով ունի իր տեսակէտը:

Արաբական Լիկայի ընդհանուր քարտուղարը նաեւ այցելեց մշակոյթի նախարար Ղասսան Սալամիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, որ ճաշկերպ մը տուաւ ի պատիւ անոր:

ՆԱԽԱԳԱՅ ԼԱՀՈՒՏ ԵՒ ՆԱԽԱՐԱՐ ՍԱԼԱՄԻ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԱՐԱՔԱԿԱՆ ՎԵՅԱԺՈՂՈՎԻՆ ԿԱՊՈՒԱԾ ԴԱՐՅԵՐ

Հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ մշակոյթի նախարար Ղասսան Սալամիի հետ քննարկեց Պէյրութի մէջ գումարուելիք արաբական վեհաժողովի նախապատրաստութիւնները, ապա հաղորդակցութեան միջոցներու նախարար ժան Լուի Քըրտահիի հետ քննարկեց բջիջային հեռաձայնի հարցերու լուծման ընթացքը, ինչպէս նաեւ կատարութեան ժողովի օրակարգի կարգ մը կետերը:

Երեսփոխաններ Ալի Խալիլ, Քասեմ Հաշեմ եւ Մոհամէտ Եահիա նախագահ Լահուտի հետ քննարկեցին ընդհանուր քաղաքական հարցերն ու իրենց շրջաններու կարիքները:

Նախագահը երէկ նաեւ ընդունեց Ընկերային Ապահովագրութեան Ազգային Սնտուկի նախագահ Մոհամէտ Քարաքին եւ Ռիատ Թահայի անուան մշակութային կեդրոնի նախագահ Ժիհատ Թահան:

ՊԵՅՐՈՒԹԻ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏԻ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ ԿԱՏԱՐԵՑԻՆ ԶԳՈՒՇԱՑՄԱՆ ԳՈՐԾԱԴՈՒԼ

Պէյրութի նաւահանգիստի պաշտօնեաներն ու աշխատակիցները իրենց սենտիքային որոշումով երէկ կատարեցին զգուշացման գործադուլ մը, որուն պատճառով ամբողջովին դադարեցաւ նաւահանգիստին գործունէութիւնը:

Սենտիքայի նախագահ Պըշարա Ամար յայտարարեց, որ այս գործադուլով կը պահանջեն մասնակից դառնալ նաւահանգիստին գծով որեւէ ծրագրի:

Նշենք, որ սենտիքան այս ձեւով կը հակադէմ լինէր իրեն, թէ կատարութիւնը կը ծրագրէ նաւահանգիստը ապապետականացնել, գործէ արձակել եւ անոր պաշտօնեաներն ու աշխատակիցները:

ԻՍՐԱԵԼԵԱՆ ՈՒԺԵՐ ԴՎԱՐՁԵԱԼ ԿՐԱԿ ԿԸ ԲԱՆԱՆ ԴԵՊԻ ՀԱՐԱԻԻ ԳԻՒՂԵՐ

Իսրայէլեան ուժեր երէկ Մագաբի Շրայա-յի իրենց դիրքերն ուժեղացնելու Քիթրոն-պայի իրիսիք գտնուող բարձունքները, եւ Ռամթայի դիրքէն գնդաջորդներով կրակ բացին Մագրասա Պասթրայի վրայ:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

ՈՒՔՐԱՆԻՍԱ. — Ուրբախիոյ հանգրեւէն մեկուկ մէջ պայթում մը պատճառով հիմա գոն, յայտնեցին պաշտօնատարներ: Պայթումը պատահեցաւ Տոնցեցի շրջանին մէջ:

ՄԱՀԱԶԴ

Տիար Բարսեղ Սիւլեան
Տէր եւ տիկին Գեորգ Գազանճեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Պետրոս Միխիթարեան եւ ընտանիք
Տէր եւ տիկին Նազարէթ Սամուէլեան եւ ընտանիք
Օհանեան ընտանիք
Ճղալեան ընտանիք
Մարգիսեան ընտանիք
Նարկիզեան ընտանիք
Սիւլեան ընտանիք
Եւ համայն զազականներ կը գումար իրենց մօր, մեծ մօր, քրոջ եւ հարգատիւն:

ԿԻԻԼԻԻԶԱՐ ՍԻՍԼԵԱՆԻ
(Շնեալ՝ 1934ին)

Մահը, որ պատահեցաւ Չորեքշաբթի, 13 Փետրուար 2002ին, սրտի տագնապի պատճառով:

Յուրազակուորութեան արարողութիւնը կատարեցաւ Հինգշաբթի, 14 Փետրուար, կէսօրէ ետք ժամը 2:00ին, Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատան մատրան մէջ:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղծ:
● Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս, «Ճիրապ» շէնք, Հինգշաբթի 14, Ուրբաթ 15 եւ Շաբաթ 16 Փետրուարին:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Ս. ՎՐԱՅԵԱՆ» ՄԱՍՆԱԾԻՂ

ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Համազգային «Ս. Վրացեան» մասնաձեւով տարեկան ընդհանուր ժողովը տեղի պիտի ունենայ այսօր՝ Ուրբաթ, 15 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 7:30ին, միութեան տան մէջ:

ԵՆԱԾԻՂ. Ժամը 8:30ին, ներկաներուն թիւը մեծամասնութիւն պիտի նկատուի:

ՎԱՐՉՈՒԹԻՆ

ԹՈՒՐԲԻՈՅ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ ԳՈՂԱՅՈՒՄ ՉԵՆ ՏԱՐ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱԿՆԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՆ

ԿՐԸՍԵ ՎԵՐՀԵՕԿԸՆ

ԱՆԳԱՐԱ, 14 (ՌՈՑԹԸՐԸ).- Եւրոպական Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար կուսակցութիւնը Վերհեյտերն Հինգաբլի օր յայտնած է, թէ թեկնածու Թուրքիոյ քաղաքական նորագոյն բարեկարգումները, որոնց նպատակը Ե. Միութեան չափանիշներուն հասնելն է, գոհացում չեն տար պլուրին ակնկալութիւններուն:

Թուրքիա այս ամիս ազատ խօսքի վերաբերեալ օրէնքներ բարեփոխած է:

Ե. Միութիւնը, որ 1999ին Թուրքիան թեկնածու դարձուցած է, յայտնած է, թէ անդամակցութեան վերաբերեալ բանակցութիւնները պիտի չսկսին, մինչև որ Թուրքիա մարդկային իրաւանց իր մարզին մէջ յառաջդիմութիւն արձանագրէ:

Անգարա ըսած է, թէ կ'ուզէ, որ Ե. Միութիւնը մինչև այս տարեվերջ թուական մը ճշդէ անդամակցութեան բանակցութեանց սկսման համար:

«Թրքական ծիրի մէջ բարեփոխումները բարելաւում են: Եթէ զանոնք զուտ արեւմտեան եւրոպական ծիրի մէջ դիտէք, կարգ մը հարցեր պիտի գտնէք», ըսած է Վերհեյտերն, Անգարայի մէջ տեսակցութիւն ունենալէ ետք արտաքին գործոց նախարար իսմայիլ ձէմի հետ:

Պլուր անցեալ տարի ողջունած էր Թուրքիոյ սահմանադրութեան մէջ լայնածիր բարեկարգումներ, որոնց կարգին՝ քրտերէն սփռումներու դէմ արգելքներու ջնջումն ու քաղաքական կուսակցութեանց գործունէութեան արգելումը աւելի ղժուարացնելու քայլերը:

Թուրքիա Ե. Միութեան կողմէ պահանջուած այլ բարեկարգումներու պէտք է ձեռնարկէ յառաջիկայ ամիսներուն: Անոնց կարգին է մահապնդիւնի ջնջումը:

ՄԱՐԱԿՑԻՈՒՆԵՐ

Թրքական ատեան մը երէկ չորս մահապնդիւն արձակած է 1999ին պատահած ակառուած ինքնաշարժի մը պայթումին առնչութեամբ, որ 3 զոհ խլած էր եւ ծանրօրէն վիրահարած՝ Չանքիթի կառավարիչը:

Չարակողմեան զինեալ խմբակ մը ստանձնած էր գործողութեան պատասխանատուութիւնը:

ԹՈՒՆՈՒՉ

ՆԱԽԱԳԱՀԸ

ԿՈՒՉԵ ԲԱՐԵՓՈՒՆԵԼ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Թունույի նախագահ Չէյն Ապիտին Պըն Ալի, որ 15 տարիէ ի վեր իշխանութեան վրայ կը գտնուի, կ'ուզէ բարեփոխել սահմանադրութիւնը՝ երկարաձգելու համար նստաշրջանը, որ կ'աւարտի 2004ին:

Թունույի սահմանադրութիւնը չ'արտօսեր, որ Պըն Ալի 2004ի ընտրութիւններուն թեկնածութիւն ներկայացնէ վերընտրուելու համար: Պըն Ալիի նախագահական վերջին նստաշրջանը կ'աւարտի 2004ին եւ երէ սահմանադրութիւնը փոփոխութեան չենթարկուի, ան վերընտրուելու իրաւունք չ'ունենար:

Կառավարութիւնը Չորեքշաբթի օրուան նիստի աւարտին յայտարարեց, որ սահմանադրութեան փոփոխութիւնը կ'առաջարկուի՝ առիթ տալու նախագահին, որ թեկնածութիւնը ներկայացնէ: Յայտարարութիւնը չնշեց, սակայն, թէ սահմանադրութեան բարեփոխութեամբ քանի՞ նստաշրջանի իրաւունք պիտի ունենայ նախագահը:

Թունույի նախագահական վերջին ընտրութիւնները կայացած էին 1999ին, երբ Պըն Ալի 99,5 առ հարիւր քուէներով յաղթանակ ապահովեց ընդդիմադիր երկու թեկնածուներու դէմ: Նոյն տարին Պըն Ալի հաստատեց օրէնք մը, ըստ որուն նախագահական թեկնածութեան առաւելագոյն տարիքը 70 պիտի ըլլայ: Պըն Ալի ներկայիս 63 տարեկան է:

Կառավարութեան նիստին քանի մը ժամ առաջ, Պըն Ալի յայտարարած էր, որ սահմանադրական բարեփոխումներու ծրագիրը հանրաքուէի պիտի դնէ:

(ՌՈՑԹԸՐԸ)

ԿԻՊՐՈՍԻ ՏԱԳՆԱԳ

ՏԵՆՔԹԱԾ - ՔԼԵՐԻՏԷՍ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆ ՆԵՐԸ ԿԸ ԸԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

ՆԻԿՈՍԻԱ, 14 (ՌՈՑԹԸՐԸ).- Թուրք կիպրացի դեկավար Ռաուֆ Տենքթաշ Հինգաբլի օր յայտնած է, թէ բաժնուած կղզիին հարցին լուծում մը գտնելու նպատակով, յոյն կիպրացիներուն հետ տեղի ունեցող բանակցութիւնները Մարտին թափ պիտի ստանան՝ Ատհալի առիթով դադարէ մը ետք:

Տենքթաշ եւ կիպրոսի նախագահ Կլաֆթոս Քլերիտէս շաբաթը երեք անգամ հերթականութեամբ ժողովներ գումարած են՝ կղզիին բաժանումին հարցը լուծելու համար:

Մարտին, ըստ Տենքթաշի, ժողովները աւելի երկարատեւ, սակայն նուազ յաճախակի պիտի ըլլան, շաբաթը 2 անգամ:

ԻՐԱՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՉԻ ՆԿԱՏԵՐ ՄԱԿԻ ԲՆՆԻՉՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

ՌՈՒՄԱ ԿԸ ԲՆՆԱԴԱՏԷ ԻՐԱՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՑՈՒԱԾԸ

Ռուսիա թափառուա իրաքի դէմ ամերիկեան հաւանական գործողութեան մը հանդէպ քննադատութեան, դիտել տալով, որ միակողմանի գործողութիւնները կը սպառնան ահաբեկչութեան դէմ կապուած համաշխարհային ճակատին:

Արտաքին գործոց նախարար Իկոր Իվանով ըսաւ, որ պիտուրական յարձակումները առանձին չեն կրնար պարտութեան մատուցել ահաբեկչութիւնը եւ թէ ուժի գործածութիւնը պէտք է նախ ապահովէ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին հաւանութիւնը: Նախագահ Վլատիմիր Փութին իր կարգին Երկուշաբթի օր ըսած էր, որ արդարացուցիչ պատճառ չկայ ուժի դիմելու իրաքի, Իրանի կամ Հիւսիսային Քորէայի դէմ:

Իվանով դիտել տուաւ նաեւ, որ Իրաքի դէմ ամբաստանութիւնները պէտք է հիմնուած ըլլան շօշափելի փաստերով: Ան աւելցուց, որ պիտուրական գործողութիւնը ծայրայեղական միջոցառում մըն է, որ չի կրնար լուծել ահաբեկչութեան հարցը: Իվանով ըսաւ նաեւ, որ համաշխարհային ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ պէտք է օգտագործել նաեւ քաղաքական, տնտեսական եւ քաղաքական միջոցառումներ եւ համակարգել միջազգային ընտանիքին բոլոր ճիգերը:

Միւս կողմէ, ահաբեկչութեան դէմ արշաւին մէջ Միացեալ Նահանգներու գլխաւոր դաշնակից Բրիտանիա յայտնեց, որ տեղեակ չէ, թէ Ուաշինգթոն կը ծրագրէ յարձակի իրաքի վրայ: Պաշտպանութեան նախարար ձէֆ Հունըսա, որ անակընկալի պիտի մատուցի, եթէ իմանայ, որ Իրաքի դէմ գործողութիւն մը կատարուած է առանց խորհրդակցելու: Վերջինս ասելով, որ Իրաքի մէջ վարչապարզի փոփոխութիւն պէտք է տեղի ունենայ: Ան աւելցուց, որ Բրիտանիա եւս կը հաւատայ, որ Իրաք աւելի ապահով է աւելի հանդիսատէսի վրայ ՄԱԿի ղեկավարութեան հետ լուծուած է իր ընտրութիւններուն մէջ եւ թէ ինք իբրեւ նախագահ ամէն միջոցի պիտի դիմէ իր երկիրի եւ ամերիկացի ժողովուրդին պաշտպանութեան համար:

Միւս կողմէ, Ֆրանսա կոչ ուղղեց Միացեալ Նահանգներու դաշնակիցներուն հետ խորհրդակցելու իրաքի դէմ պիտուրական որեւէ գործողութեան ձեռնարկելէ առաջ, շեշտելով, որ յարձակումը լուծում չէ: Արտաքին գործոց նախարարութեան քարտէսը ըսաւ, որ Ուաշինգթոն պէտք է խորհրդակցի դաշնակիցներուն եւ յատկապէս՝ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի անդամներուն հետ:

Պաշտպանութեան նախարար Ալէն Ռիշար իր կարգին ըսաւ, որ ՄԱԿ պէտք է խստացնէ ճնշումը Իրաքի վրայ, որպէսզի անիկա ընդունի կէսքի քննիչներուն վերադարձը: Ռիշար դիտել տուաւ սակայն, որ թէեւ պատժամիջոցները ակնկալուած

արդիւնքը չեն տար, բայց Եւրոպայի պիտուրական գործողութիւնն ալ լուծում մը չէ:

ԻՐԱՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՉԻ ՆԿԱՏԵՐ ՉԵՆՔԻ ԲՆՆԻՉՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Իրաքի փոխ նախագահ Թահա Եսաին Ռամատան յայտնեց, որ կարիքը չկայ ՄԱԿի կէսքի քննիչներուն խմբակի անդամ «գրտես»ներուն վերադարձին, որովհետեւ Իրաք մաքրագործուած է հաւաքական քանդուածի կէսքերէն:

Ռամատան կը խօսէր Պաղտատի իշխանութեան համակիր քիւրտ ղեկավարներու հետ: Ռամատան վերադարձին զարմարեց Պուշ յայտարարեց, որ Իրաքի դէմ բոլոր ընտանքները բաց են ու անարկելի, բայց Եւրոպայի պիտուրական յայտարարեանոնց մասին: Պուշ աւելցուց, որ Սատանա Հիւսէյն պէտք է հասկընայ, թէ Ուաշինգթոն լուրջ է իր ընտրութիւններուն մէջ եւ թէ ինք իբրեւ նախագահ ամէն միջոցի պիտի դիմէ իր երկիրի եւ ամերիկացի ժողովուրդին պաշտպանութեան համար:

Միւս կողմէ, Ֆրանսա կոչ ուղղեց Միացեալ Նահանգներու դաշնակիցներուն հետ խորհրդակցելու իրաքի դէմ պիտուրական որեւէ գործողութեան ձեռնարկելէ առաջ, շեշտելով, որ յարձակումը լուծում չէ: Արտաքին գործոց նախարարութեան քարտէսը ըսաւ, որ Ուաշինգթոն պէտք է խորհրդակցի դաշնակիցներուն եւ յատկապէս՝ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի անդամներուն հետ:

Պաշտպանութեան նախարար Ալէն Ռիշար իր կարգին ըսաւ, որ ՄԱԿ պէտք է խստացնէ ճնշումը Իրաքի վրայ, որպէսզի անիկա ընդունի կէսքի քննիչներուն վերադարձը: Ռիշար դիտել տուաւ սակայն, որ թէեւ պատժամիջոցները ակնկալուած

արդիւնքը չեն տար, բայց Եւրոպայի պիտուրական գործողութիւնն ալ լուծում մը չէ:

«ԲԱՅԻՏԱ»Ի ԽՈՅՍ ՏՈՒՍԸ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԻՐԱՆ ՈՉ ԵՇԳՐԻՏ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՄՍԱՅԱԾ Է ՈՒԱՇԻՆԿԱԾԸՆԵՆ

Իրան երէկ յայտնած է, թէ իր թշնամիքն՝ Մ. Նահանգներէն տեղեկութիւններ ստացած է «Քալիտա» ցանցի խոյս տուած անդամներու մասին, սակայն, ըսած է անիկա, այդ տեղեկութիւնները «հին, սխալ եւ ոչ ճշգրիտ» եղած են:

Թեհրան այս ամսուան սկիզբը մարտահրաւէր ուղղած էր Ուաշինգթոնի, որպէսզի փաստեր հրապարակէ, թէ ապստան տուած է Ուսամա Պըն Լատէնի «Քալիտա» ցանցի զինեալներու, որոնք Աֆղանիստանի վրայ ամերիկեան յարձակումներէն խոյս տուած են:

Իրանեան «ԻՐՆԱ» լրատու գործակալութիւնը հաղորդած է, թէ Մ. Նահանգներու Աֆղանիստանի մէջ յատուկ պատուիրակ Չալմայ Նալիզադ «Պի. Պի. Սի.» կայանին յայտնած է, թէ Ուաշինգթոն տեղեկութիւնը հաղորդած է իրանցի զինանազններու՝ Աֆղանիստանի մէջ բազմակողմանի բանակցութիւններու ընթացքին:

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ Համիտ Ռիզա Ասեֆի, Պանկլատէշ աջցելութեան մը ընթացքին յայտնած է, որ տեղեկութիւնները հին են ու սխալ:

«ԻՐՆԱ» մէջըրբերով «հաւաստի» աղբիւր մը, յայտնած է, թէ 150 անձեր, որոնց շուրջ կան կասկածներ, թէ կապեր ունին «Քալիտա»ի կամ թախսաններու հետ, ձերբակալուած են Փաքիստանի հետ սահմանին մօտ:

Տեղեկագիրին համաձայն՝ ձերբակալուածները, որոնց կարգին՝ կիներն եւ երեխաներ, արաբական, ափրիկեան եւ եւրոպական երկիրներէն են եւ անոնց մէկ քանին Ֆրանսական, բրիտանական, պելճիքական, հոլանտական եւ սպանական անցագրիներ կը կրեն:

«ԲԱՅԻՏԱ»Ի ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐԸ ՅԱՒԵԼԵԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ ԿԸ ԵՐԱԳՐԷ

Միւս կողմէ, «Նիւ Եորք Թայմզ» թերթը երէկ հաղորդած է, որ 30 տարեկան պաղեստինցի մը «Քալիտա»ի գործողութիւններու նոր պատասխանատուն դարձած է եւ կ'ենթադրուի, թէ ան կը կազմակերպէ ցանցին մնացեալ անդամները Մ. Նահանգներու դէմ նոր յարձակումներու ձեռնարկելու համար:

Ապու Չուպայտա ուղղակի մասնակցած է Սեպտեմբեր 11ի յարձակումներու ծրագրումին եւ Եւրոպայի մէջ յարձակումներու շարքի մը: Այս վերջինները տեղի պէտք է ունենային անցեալ տարի:

Մինչ այդ, Աֆղանիստանի մէջ ականատեսներ երէկ յայտնած են, թէ ամերիկեան օդանաւեր 100 տոյարնոց թղթաղարմներ «արձակած են» հարաւային Աֆղանիստանի վրայ: Անոնք գետեղուած են նախագահ ձորը Պուշի պակերը կողմ պահարաններու մէջ:

Միւս կողմէ, Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ Չորեքշաբթի օր յայտնած է, թէ պիտուէական 2003 տարուան ընթացքին, կը նախատեսուի, որ Ուաշինգթոն շուրջ 300 միլիոն տոյար օժանդակութիւն հայթայթէ Աֆղանիստանին: Անիկա արդէն այս տարուան համար 296 միլիոն տոյար խոստացած է:

ՊՈՒԵ ԳՈՎԱՍԱՆՔՈՎ ԿՐԱՏԱՅԱՅՏՈՒ ՍՈՒԲԱՐՐԱՑԻ ՄԱՍԻՆ

Նախագահ Պուշ Չորեքշաբթի օր մեծ գովասանքով արտայայտուած է Փաքիստանի նախագահ Փերվէզ Մուշարրաֆի մասին, որ Մ. Նահանգներ կ'այցելէր եւ անոր խոստացած է պարտքերուն 1 միլիար տոյարը ջնջել, իբրեւ վարձարութիւն հաւաքակցութեան դէմ պատերազմին մէջ իսլամական օժանդակութեան:

(ՌՈՑԹԸՐԸ)

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏԵՏԵԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժից պենզին, մագնիսին, իւրից, ինչպէս նաեւ լուրջու համար, վճարումին հետ միաժամանակ ցերկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեւեալ կէտերումներէն.՝

- ԱՖՇԼԻ գրասենեակ, Պուրձ Լամուտ
- Լամազ Գայիցի
- Գրատուլն Caravelle, Չալքա
- Գրատուլն Sava, Այնճար
- Գրատուլն Կոմիտաս, Պէյրութ
- Obelisk հաստատութիւն, Անթիպաս



FUEL CARDԸ ԿՐԱՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՇԵՏԵԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՄԵՉ

1. CORAL JAL EL DIB, Ժլ էլ Տիպ
2. HYPCO ANELIAS, Կարպ Ալ Դաուրն
3. SPEED ANELIAS, Կարողկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապպոթ մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, էլ Նահր PEUGEOT օճկ. առաջ
6. HYPCO HAMRA, Պանց Տի Լիպանտ առաջ
7. MEDCO KARANTINA, Զարանքի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Պամակոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Միխայէլ, Սաատ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալէրի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նատրո պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորպի կամուրջ
14. ԱՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորպ, «Ալմագա»ի կից
15. ՍԱՐԳՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրձ Լամուտ, Սիւն էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 թիւերուն:

ԶԱՐԸ
ԿԸ ՍՍԱՆԱԼ
ԳՐՈՒԹԵՆ

ՎՐԺԷՔՄՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ
ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

ԲՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԲԱՌԵՐԸ՝ ԼՕԽԻ «ՆԱՐՕՏ ԱՐՏԱԼՃԵԱՆ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Մանուկներու ընդհանուր զարգացման մեծագույն կը նպաստեն արտադրողական աշխատանքները, որոնց շարքին՝ նաեւ արշաւները: Իսկ ԼՕԽԻ «Նարոտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանը իր դաստիարակչական ծրագիրներուն մէջ տեղ կը յատկացնէ նաեւ որոշակի, որուն ընթացքին երեխաները յաճախ կը պատմեն իրենց վայելած վայրերուն մասին:

Անցեալ ամրան ընթացքին գրադարան յաճախող երեխաներէն ոմանք մասնակցեցան Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի բանակումին: Վերադառնալէ ետք վառվառն աշակերտները պատմեցին, որ իրենց վրանները լարուած էին Արագածի հարաւային լանջին Աշտարակ շրջանի Բիւրական գիւղին մօտ: Տեղին էր կանգ առնել «Բիւրական» բառին իմաստին վրայ: Արագը անմիջապէս պատասխանեց անթիւ, անհամար սկի, աղբիւր:

Մանուկները պապ ու բախտութեան նկարագրեցին ընտելեան այդ գոյտրիկ անկիւնը տեղացած օգոստոսեան յորդառատ անձրեւը, դէպի Արցախ պոյսը, յիշելով, որ անցած են Չանգեզու-

րի հրաշալի բնութեան մէջէն: Վարսենիկին թուեցաւ էր, որ այլ աշխարհ մըն է Չանգեզուը, ուր բնութիւնը չափազանց ինքնատիպ եւ հեքիաթային է: Գայիտանէն, որ տարի մը առաջ այցելած էր Ծաղկաձորը, ըսաւ, որ Հայաստանի ամէնէն գեղեցիկ վայրը Ծաղկաձորն է:

- Այո՛, այո՛, - միջմուրտեց հայաստանցի Նուրնէն: Ծաղկաձոր անուանը մարդիկ ճիշդ դրած են: Գլխապոտոյ կը զգաս բազմերանգ ծաղիկներու բոյրէն:

- Արդեօք Նուրնէն գիտէ՞ «բազմերանգ» բառին հոմանիշները:

Նուրնէն փութով վերցուց բառարանը եւ թուեց, երբինքանգ, գոյնզգոյն, խայտաբղետ, բազմագոյն եւ այլապէս շարունակեց, եւ ձմրան ալ, երբ ոչ մէկ ծաղիկ կար, գացած եմ Ծաղկաձոր: Ծաղկաձորը նոյնքան հմայիչ է:

- Ձմրան նոյն հմայքը ունին Լիբանանի շրջաններէն Արզը, Լաքուքը, Ծարայան, ընդհատեց վարդանը:

Անուցը զրոյցը շարունակուեցաւ խաղ - մրցումի ձևով՝ գտնելու համար «հմայիչ» բառին հոմանիշները՝ կախարդիչ, դիւթիչ, թովիչ, հրապուրիչ, գրաւիչ:

Անոնք նաեւ յիշեցին Լոռիի սքանչելի վանքերէն Հաղբատն ու Սանահինը:

- Լոռիի բարձր լեռները հեռուէն կարծես երկինքին մէջ իրարու միացած են, - բացականչեց Մարիան:

- Ինչպիսի՞ լեռներ կրնանք ըսել, - միջմուտեց թերեզը:

- Բարձրաբերձ, երկնամերձ, երկնազնաց, երկնահաս, շարունակեց թուրքը:

Գիտել տուի, որ բարձր լեռներուն կ'ըսեն նաեւ հպարտ, սէգ, վեհ լեռներ:

Մանուկներն ու պատանիները եկան այն եզրակացութեան, որ բնութիւնը ամէն տեղ հմայիչ է: Եւ եթէ բնութիւնը կրնայ ներդաշնակել իր անմասն երփներանգութիւնը, ապա «Նարոտ Արտալճեան» մանկապատանեկան գրադարանը կրնայ երեխաներուն մէջ միաժամանակ զարգացրել ընտելեան եւ գրականութեան սէրը: Իսկ բնութիւնը աւելի կը գեղեցկանայ, երբ մարդը անոր հրաշալիքներուն կողքին կը ստեղծէ նաեւ իրը:

ՌՈՒՋԱՆԱՆ
ՌԼԻԿԵԱՆ

ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԵՒ ԽՈՐԱՆԻ ՄԵԾ ԽԱՉԻ ՕԾՈՒՄ «ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆ»Ի ՄԷՋ



Չարեհ արք. Ազնաւորեան՝ խաչի օծումի պահուն:

Ուրբաթ, 8 Փետրուարի երեկոյեան ժամը 6:30ին, «Թոշնոց Բոյն»ի Ս. Գայիտանէ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ Ս. պատարագ՝ ներկայութեամբ «Թոշնոց Բոյն»ի բարերարներուն, բարեկամներուն, ծնողներուն, ուսուցչական կազմին եւ ծիպէլի հայրութեան: Պատարագը մատուցեց Պարթեւ վրդ. Կիւրիմեան:

Ս. պատարագի ընթացքին տեղի ունեցաւ Տէրուհի եւ սուրբերու եօթը մեծադիր պատկերներու եւ խորանի մեծ խաչի օծում՝ ձեռամբ Չարեհ արք. Ազնաւորեանի: Եկեղեցիին նուիրուած պատկերներն ու խաչը հետեւեալներն էին «Յարութիւն» բարերարութեամբ Պերճ Համբարձումեանի, Վահէ Համբարձումեանի, Յովհաննէս Համբարձումեանի եւ Նազարէթ եւ Ալիս Գասպարեան ամուսին, «Խաչելութիւն»՝ բարերարութեամբ Ժողէֆին Համբարձումեանի, «Ս. Գրիգոր Լուսաւորիչ»՝ բարերարութեամբ Վարդուհի Կոպալեան - Յակոբեանի, «Ս. Աստուածամայր Աւետում»՝ բարերարութեամբ Հուրիսիմէ Սարգսյանեանի, «Ս. Աստուածամայր»՝ բարերարութեամբ Արուսեակ Մինասեանի, «Յիսուսի վերջին ընթիւր»՝ բարերարութեամբ Քէթի Քիրիաքոյի, «Ս. Թաղէոս եւ Ս. Բարթոլոմէոս»՝ բարերարութեամբ Եղիսաբէթ Գէորգեանի եւ խորանի արծաթեայ մեծ խաչը՝ բարերարութեամբ Անահիտ Յովհաննէսեանի:

Չարեհ արք. Ազնաւորեան իր քարոզին մէջ վերադառնալով նկարներու եւ սրբապատկերներու կարեւորութիւնը եկեղեցական կեանքին մէջ: Ան ըսաւ, թէ մենք նկարները չենք պաշտեր, այլ՝ Աստուած, բայց Աստուծոյ ներկայութիւնը կը տեսնենք այդ նկարներուն ընդմէջէն: Այդ նկարները ձեռով մը պատուան կը դառնան, եւ այդ պատուանէն մենք երկինքը կը դիտենք՝ փնտրելու եւ տեսնելու համար Աստուած:

Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգիստի արարողութիւն՝ նուիրուածներու հարազատներու յիշատակին:

ՊՈՒԿԱՐԱՆԱՅ ԿԵԱՆՔ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

●ՓԼՈՎՏԻԻ
Փլովտիւհաճախի 7 Փետրուարին նշած են Վարդանանց հերոսամարտը: Փլովտիւի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ կատարուած է առաւօտեան պաշտամունք, այնուհետեւ Գէորգ Ա. քնն. Նաչերեան եւ Դանիէլ քնն. Գարաբեան մատուցած են պատարագ:

Պատարագէն ետք Գէորգ Ա. քնն. Նաչերեան խօսած է Աւարայրի ճակատամարտին եւ անոր հոգեւոր նշանակութեան մասին:

●ՌՈՒՍԷ
Ռուսէի հայրութիւնը նաեւ նշեց Վարդանանց՝ յատուկ տօնակատարութեամբ: Այսպէս, Ռուսէի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Պուլկարիտի եւ Ռուսմանիոյ հայոց առաջնորդ Տիրայր քնն. Մարտիկեան եւ Ռուսէի հոգեւոր հովիւ Տիրայր քնն. Հատաւեան մատուցած են Ս. պատարագ: Պատարագի ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի սկառուները բերած են իրենց անուանակութիւնը:

Տիրայր քնն. Մարտիկեան իր քարոզին մէջ ընդգրծած է Աւարայրի ճակատամարտին իմաստը եւ երիտասարդներուն կոչ ուղղած է յիշելու եւ յարգելու այն բոլոր մարտիկները, որոնք զոհուեցան այս ճակատամարտին ընթացքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴՊՐՈՑԻՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի պետական կառավարման դպրոցը Հայաստանի մէջ գտնուող միակ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնն է, որ կը պատրաստէ պետական պաշտօնները: Ըստ դպրոցի տնօրէն Ռաչատուր Բեգիբեկեանի, իւրաքանչիւր տարի Հաստատութիւնը կ'ընդունի շուրջ 38 հոգի՝ երկամեայ ուսման հետեւելու համար: Ասոր կողքին, Հաստատութեան մէջ գանազան պետական հաստատութիւններէ գործուողուած աւելի քան 300 պետական պաշտօնեաներ երկու շաբթուան ընթացքին կը հետեւին վերաորակաւորման դասընթացներու: Դպրոցը ունի նաեւ հեռակալ ուսուցման բաժին, որ կը տեւէ 2,5 տարի եւ կրնայ ընդունել շուրջ 30 ուսանող՝ տարեկան 500 տոյր վճարումով:

Յայտնենք, որ պետական կառավարման դպրոցը ունի իր առանձնապատկերները: Դպրոցին մէջ ուսանելու իրաւունք ունին միայն բարձրագոյն կրթութիւն ունեցող անձեր եւ հոն նեղ մասնագիտական ուսուցում չի տրուիր, այլ ընդհանուր ծրագիր կը մշակուի պետական պաշտօնեաներուն համար: Ռ. Բեգիբեկեանի համաձայն, Հայաստանի պետական կառավարման դպրոցին մէջ ուսանողները ունենալով հետեւողներ են, իսկ յառաջիկային կը ծրագրուի բարձրացնել դպրոցին դերը:

Յայտնենք, որ այս դպրոցը հիմնուած է 1994 թուականին եւ այս ընթացքին ան համագործակցած է միջազգային գանազան կազմակերպութիւններու հետ:

ԱՆԴՐԿՈՎՎԱՍԻ ԵՒ ՇՐՋԱՆԻ ԵՐԿԻՐՆԵՐՈՒՆ ԲԱՆԱԿՆԵՐԸ

Միացեալ Նահանգներու մէջ վերջերս լոյս տեսած «Ուորլտ Այմաւարտ 2002» պարբերականին մէջ տուեալները հրատարակուած են աշխարհի պետութիւններու բանակներուն թիւին եւ այդ բանակներուն վրայ ծախսուող գումարներուն մասին:

Ըստ այդ տուեալներուն, Անդրկովկասի մէջ ամէնէն տկար բանակը ունի Վրաստանը: Անոր բանակին թիւը 26,900 է, իսկ այդ բանակին վրայ տարեկան կը ծախսուի 22 միլիոն տոյր: Ազրպէյճանի բանակին թիւը 72,100 է, իսկ պիւտճէով նախատեսուած է 119 միլիոն տոյր:

Այստեղ Հայաստանի բանակին մասին տուեալներ չկան, սակայն հայկական բանակին համար պետական պիւտճէով նախատեսուած գումարը 96 միլիոն տոյր է: Ստորեւ՝ Անդրկովկասի շրջանին մօտ երկիրներու բանակներուն թիւնքանակը եւ պիւտճէով անոնց համար նախատեսուած գումարները (տոյրով):

Երկիր	ԹՈՒԱԲԱՆԱԿ	ՊԻՏՏՃԷ
Թուրքիա	609,700	7,7 միլիոն
Իրան	513,000	7,5 միլիոն
Իրաք	429,000	1,4 միլիոն
Չինաստան	2,470,000	14,5 միլիոն
Հնդկաստան	1,303,000	15,9 միլիոն
Ռուսիա	1,004,000	29 միլիոն
Եգիպտոս	448,500	2,5 միլիոն
Իսրայէլ	172,500	7 միլիոն
Ֆուէյթ	15,300	2,6 միլիոն
Յորդանան	103,800	488 միլիոն
Սուրիա	316,000	1,8 միլիոն
Սէուտական Արաբիա	126,500	18,7 միլիոն
Փաքիստան	612,000	3,3 միլիոն
Լիբանան	63,000	560 միլիոն
Յունաստան	159,000	3,3 միլիոն

«ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՏԱՆ» ՇԷՆՔԻՆ ՄԷԿ ՀԱՏՈՒԱԾԸ՝ ՓԼԱԾ

10 Փետրուարին փլած է Երեւանի «Գերմանական տուն» կոչուող 4 յարկանի շէնքին մէկ հատուածը: Շէնքին վրած մասին մէջ հաստատուած էին պետական քերթիք եւ պետական ֆինանսական - դրամատանային քոլեճները:

Չմեռնային արձակուրդի մէջ գտնուող վերոյիշեալ հաստատութիւններուն մէջ կ'ուսանին ընդհանուր թիւով 3005 աւելի ուսանողներ: Դասուանդութիւնները պիտի վերսկսին 1 Մարտին: Ըստ Հայաստանի կրթութեան եւ գիտութեան նախարարութեան պիտի կատարուին շէնքի նորոգման աշխատանքները:

ՆՆՄԱՐ ՍԱԼԹ ԼԷՅՔ ՍԻԹԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՌԱԳՈՅՆԸ ԵՒ ԱՅԼ ԲԱՆԵՐ...

Կրկին շաբաթավերջ էր. մէկը այն հարիւրաւոր շաբաթավերջերէն, գոր աւելի քան 17 տարիներու ընթացքին անդադար, անցուցած էի «ԿԱՄԻ» խմբագրատան մէջ:

Երեւոյթով Ուրբաթ օրերը նման են իրարու, բայց եւ միշտ ալ այդ օրը հակասական զգացումներ ունեցած եմ: Մէկ կողմէ հոգեկան գոհուցանութիւն՝ շաբթուան աշխատանքս աւարտած ըլլալուն համար, միւս կողմէ՝ մտահոգ, թէ պակաս քան մը մնացած էր, թէ կրնայի՞ աւելի ընել, թէ արդեօք սխալ մը սպրդած էր օրաթերթին էջերուն վրայ, եւ այլն, եւ այլն:

Այսպիսի մտքերով տարուած՝ տուն հասայ: Յոգնած էի: Ինկայ բազմոցին վրայ ու բնացայ:

Կես գիշեր էր երբ արթնցայ: Անմիջապէս ուշադրութիւնս գրաւեց հեռաւեպի խօսակցի յայտարարութիւնը: Չմեռնային 19րդ Ողիմպիական խաղերուն բացումը պիտի կատարուէր առտուան ժամերուն:

Մէկ անգամէն աշխուժացայ: Գիտէի որ Հայաստանն ալ պիտի մասնակցէր: Ուրեմն մեր ետագոյնը պիտի ծածանէր տողանցքի ընթացքին:

Յաջող երեք ժամերը ձեռով մը անցուցի եւ առաւօտեան ժամը 3ին տեղաւորուեցայ հեռաւեպի պատահին առջեւ: Մանաւաճ որ մեր մարզիկներուն մուտքը պիտի չուշանար, այլ բնական կարգով Հայաստանը առաջիններու շարքին էր:

Եւ սկսաւ... այսպէս կոչուած ամերիկեան ցուցադրութիւնը: Փայլփլող լոյսերը, շուշուղուն գոյները, սառույցի վրայ պարողները, այդ սառնամանիքի հազարաւոր ներկաներու բացականչութիւնները, նիւ ետքի գոյգ երկնաքերներուն վրայի այրած դրօշակին պանծացումը, Ամերիկայի նախագահ ձորն Պուշի խորհրդաւոր մուտքը Սալթ Լէյք Սիթիի բաց բեմին վրայ, ամէնը, ամէնը պատրաստուած էին մէկ թեմային շուրջ՝ յարգել յիշատակը 11 Սեպտեմբերի ողբերգութեան զոհ գացած մարդոց: ... Երաժշտութիւն, լոյսերու գլխապոտոյ պատճառող խաղ, վառող ճրագներ, հրավառութիւն, կանցներու եւ ապահովական պաշտօնեաներու օրերէ ի վեր մանրակրկիտ աշխատանք... այլ խօսքով՝ ազգայնամոլութեան աստիճանի հասնող նոյն, շատ նոյն հանդիսութիւնը...:

Գիտելով այս բոլորը՝ մտաշխարհս տակն ու վրայ եղաւ: Կրնայ մէկը ըսել, թէ չցնցուեցաւ 11 Սեպտեմբերի ահաբեկչական դէպքերէն, կրնայ մէկը համաձայն ըլլալ կոյր ահաբեկչութեան: Ո՛չ, հազար անգամ ո՛չ:

Բայց Սալթ Լէյք Սիթիի մէջ հաւաքուած բազմահազար ժողովուրդը կամ հեռաւեպի միլիոնաւոր դիտորդները այդ խանդավառութեան պահուն կայրկեան մը մտածեցի՞նք Ամերիկայի գերարդիական գեներէլները արականուող ուսմանը գոհը դարձած անմեղ աֆղաններու մասին: Ո՛վ մտածեց միլիոնաւոր իրաքցի այն մանուկներուն մասին, որոնք ամերիկեան շրջափակման իբրեւ հետեւանք մեռանք քերտումի պատճառով: Իսկ ո՞վ մտածեց աւելի քան 250 հազար աշխատաւոր մանուկներուն մասին, որոնք մեր դարուն կը տառապին թոքախտէ կամ այլ մանց հիւանդութիւններէ: Կամ արդեօք մտածեց մէկը Արաֆաթի նման անճարարութեան մը մասին, որ երկու ամիսէ ի վեր բանարկուած կը մնայ Ռամալլայի իր կեդրոնատեղիին մէջ... շրջափակուած իսրայէլեան հրասայլերով, իսկ Սապրայի եւ Ծափիլի ռերագործութեան հեղինակը Թէլ Աւիւ- Ուաշինկթըն մնալուն ետք ու դարձի համբուց վրայ հրամաններ արձակելով կը փորձէ նստեցնել ճնշուած ժողովուրդի մը ազատագրական պայքարը:

Տողանցողներու շարքին ամէնէն շատ ծափահարողները Ամերիկայի եւ Իսրայէլի պատուիրակութիւնները եղան, այդ նոյն Իսրայէլին, որուն դեսպանը, Երեւանի մէջ կայացած մամուլի աւուլի ընթացքին, նոյն օրը կը յայտարարէր, թէ իրական ցեղասպանութիւնը Հրեական Ողջակիցումն էր, իսկ Հայկական Ցեղասպանութիւնը պարզապէս ողբերգութիւն մըն էր...: Մեղա՛յ, մեղա՛յ...

Սրափեցայ...: Լուսաբաց էր: Մտածեցի, թէ արդեօք կ'արժէ՞ր անբուն գիշեր մը անցնել այս բոլորը վերջիշելու համար: Բայց չէ՞ որ Հայաստանի պատուիրակութիւնը աշխարհի այլ երկիրներու կարգին ետագոյնը պարգած հպարտօրէն տողանցեց Սալթ Լէյք Սիթիի բաց դաշտերուն վրայ:

Կ'արժէր, անշուշտ որ կ'արժէր: Ինքզինքս միլիարներով միլիոններուց առօրեայիս մէջ:

Լ. ՄՈՒՐԱՏԵԱՆ
Փարիզ
«Կամք»

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅ ԴԱՏ

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԲԱՆԱԶԵԻ՝ Ե. Խ. ՎԵՀԱԺՈՂՈՎԻՆ

Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերությունները յանձնաժողովի նախագահ Յովհաննէս Յովհաննիսեան 9 Փետրուարին յայտարարեց, որ Եւրոխորհրդարանի Խորհրդարանական Վեհաժողովին յառաջիկայ նստաշրջանին Հայաստանի պատուիրակութիւնը պիտի ներկայացնէ Հայկական Յեղապանութեան ճանաչման բանաձեւը: Յովհաննիսեան յայտնեց, որ պատուիրակութիւնը արդէն իսկ 120 ստորագրութիւն հաւաքած է վեհաժողովի երեսփոխաններէն:

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՆՇԵԼ ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ԶԱՐԴԻՆ 14ԱՄԵԱԿԸ

Փետրուար 26ին Հայաստանի մէջ պիտի նշուի Սուվկայիթի ջարդին 14ամեակը: Ազրպէյճանի կարգ մը քաղաքներուն, յատկապէս Պաքուի եւ Սուվկայիթի մէջ Հայ քաղաքացիներուն դէմ 28 Փետրուար 1988ին սկսած եւօրեայ ջարդը խլած էր բազմաթիւ հայերու կեանքը: Փետրուար 26ին Հայկական ոչ կառավարական կազմակերպութիւններ յիշատակի իրենց տուրքը պիտի մատուցեն Հայկական Յեղապանութեան զոհերու յուշակոթող Միժեռնակարբուղի մէջ:

«Արմինֆօ» լրատու գործակալութեան համաձայն, Ազրպէյճանի խորհրդարանը եւս պիտի անդրադառնայ 1998 Փետրուարի դէպքերուն: Խորհրդարանի նախագահ Մուրթուզ Ալեքսեբեով յայտարարած է, թէ խորհրդարանը իր 20 Փետրուարի նիստին «քաղաքական գնահատական պիտի տայ 1988 Փետրուարի դէպքերուն»: Ազգերի խորհրդարանականները պիտի քննարկեն նաեւ Ազրպէյճանի պաշտպանութեան նախարարին կողմէ ներկայացւած փաստաթուղթերը «Սուվկայիթի 1988ի խռովութիւններուն գծով Հայաստանի քարոզչութեան մասին»:

ՔՈՆԿՐԵՍԻ 48 ԱՆԴԱՄՆԵՐ ԴԵՄ Կ'ԱՐՏԱՅԱՅՏՈՒԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇՐՋԱՆՅՈՂ ՔԱՐԻԻՂԱՏԱՐԻ ՄԸ ԲԱՆԱԶԵԻՆ

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը կը տեղեկացնէ, որ անցեալ շաբաթ Քոնկրէսի երեք նոր անդամներ՝ Փեթրիք Բենետի, Քրիս Սմիթ եւ Հիլտա Սոլիս իրենց ճանաչման յայտնած են, թիւ 162 բանաձեւին՝ 48ի հասցնելով այդ կեցուածքը որդեգրած Քոնկրէսի անդամներուն թիւը: Թիւ 162 բանաձեւը կ'առաջադրէ պետական յատկացում չկատարել Հարաւային Կովկասի մէջ քարուղատարի որեւէ ծրագրի, որ կը շրջանցէ Հայաստանը: Վերոնշեալ բանաձեւը անցեալ Յունիսին ներկայացուցիչներու Տուն յղուեցաւ՝ Քոնկրէսին մէջ Հայկական Հարցերու Համախմբումի նախագահներ ձօնադրուողի կի Ֆրէնք Փալոնի կողմէ: Անոնց միացած են ձան Սուիթի եւ ձօն Բրաուլի:

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբի գրասենեակի վարիչ - տնօրէն Արամ Համբարեան ողջունեց երեք քոնկրէսականներուն կեցուածքը՝ Ամերիկայի շահերը պաշտպանելու տեսանկիւնէն: Համբարեան յոյս յայտնեց, որ հետագային աւելի սերտորէն աշխատելու առիթ կը ստեղծուի այս տեսանկիւնին կողմնակից քոնկրէսականներու հետ, որ պէսզի կարելի ըլլայ բանաձեւին քուէարկութիւնը յաջողութեամբ պսակել:

Բանաձեւը կ'արտայայտէ հետեւեալ չորս տրամադրութիւնները:-

- 1- Ամերիկա պէտք չէ նւթական յատկացում կատարէ Հարաւային Կովկասի մէջ քարուղի կամ կազմի խողովակաշարի որեւէ ծրագրի, որուն տնտեսական շահաբեր ընդթիւ կասկածի տակ կրնայ ըլլալ կամ կրնայ խափանել Հայաստանը շրջանային բարգաւաճ գոտիի մը մէջ ներառելու ամերիկեան վարքագիծը:
- 2- Հարաւային Կովկասի քարուղի կամ բնական կազմի խողովակներու գիծերուն կապակցութեամբ ըրոր առաջարկները պէտք է ուշադիր կերպով արժեւորուին վստահ ըլլալու համար, որ Կովկասի ըրոր երկիրները ներառուած են ուժանիւթի փոխադրական գիծերուն մէջ:
- 3- Խողովակաշարի որեւէ ծրագրի եւ յատկապէս Պաքու - ձէյհան գիծի ուսումնասիրութեան ընթացքին, որ կը կատարուի ամերիկեան կառավարութեան ծախսերով, պէտք է ներառնէ Հայաստանէն անցնելու ընտրանքը:
- 4- Կառավարութիւնը պէտք է գումար յատկացնէ յայտնական ըլլալու համար:

Անցեալ Հոկտեմբերին այս տրամադրութիւնները արտայայտող բանաձեւ մը մերժուեցաւ Քոնկրէսի երեւմտական սպասարկութիւններու յանձնախումբին մէջ՝ քարուղի լուպիին ճնշումին տակ: Նշեալ բանաձեւը կ'առաջադրէր գրամատնային երաշխիք չտալ Հայաստանը շրջանցող քարուղատարին:

ԹՐԵԱԿԱՆ ՍԱՍՈՒԼ ՈՉ ՄԵԿ ԶԱՐԳԱՅՈՒՄ, ԱՅՆՔԱՆ ԱՏԵՆ ՈՐ ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ ՄՏԱՅՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՏԻՐԷ

Տիրահոշակ «Հայ - քրքական Հաշտութեան Յանձնաժողով»-ին կազմալուծումը կը շարունակէ մեկան եւ... արցունք հոսեցնել քրքական մամուլին մէջ: Ստորեւ տրուած յօդուածին մէջ «Սթար» քերթի աշխատակից Սեմի Իտիզ կ'ողբայ «Հաշտութեան առիթ»-ին կորուստը եւ իր կարգին առիթ չի փախցնէր թոյն քափելու Ը. Յ. Դաշնակցութեան դէմ: Ըստ յօդուածագիրին, Դաշնակցութեան եւ Հայաստանի կառավարութեան համագործակցութեան արդիւնքը եղած է յանձնաժողովին սառեցումը:

Նիւ Եորքի մէջ Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի հետ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձէմի հանդիպումը ակնկալիքներ կրնայ յառաջացուցած ըլլալ Հայաստանի մէջ: Աւելին՝ Հայաստանի արտաքին գործոց նախարարին յայտարարութիւնները կրնան թեւերտուած ըլլալ այս ակնկալիքներուն:

Հանդիպումէն ետք Օսկանեան ըսաւ, թէ երկու կողմերուն մօտ կայ միջնորոտ մը, որ կ'արտօնէ ուղղակի բանակցութիւններ կատարել հարցերու քննարկման համար: Այսուհանդերձ իր գգուշացումը, թէ ակնկալիքները պէտք չէ չափազանցուած ըլլան, աւելի իրապաշտ ձեւով կը զրտնորէ հանդիպումին միջնորոտը:

Առայժմ չեմ կարծեր, որ Երեւան հարցերը ուղղակի բանակցութիւններով քննարկելու տրամադիր է: Ընդհակառակը, Դաշնակցութիւնը կուսակցութեան աշխուժներդրումով, Երեւան սպաննած է քանի մը նախաձեռնութիւններ, որոնք արդիւնաւէտ կրնային ըլլալ: Ասիկա կը յառաջացնէ այն հարցադրումը, թէ Օսկանեան ինչպէս ստացաւ այն տպաւորութիւնը, թէ իրապաշտութիւնները կայ միջնորոտ կայ: Նոյնիսկ եթէ այդպիսի տրամադրութիւն մը կայ Թուրքիոյ մէջ, յստակ է, թէ հայեր տակաւին պատրաստ չեն անոր, որովհետեւ հայկական կառավարութիւնը, որ կը կարծէ, թէ Թուրքիոյ դէմ իր արշաւին մէջ բաւական հող չահած է 2000ի ընթացքին, կը շարունակէ ամէն ճիգ ի գործ դնել թաղերու համար հաշտեցման միջնորոտը:

Եթէ ակնարկ մը նետելու ըլլանք «Հայ - քրքական Հաշտութեան Յանձնաժողով»-ի աշխատանքներուն վրայ, կը տեսնենք, որ նոյնիսկ այսպիսի յանձնաժողովի մը կազմութիւնը ուսումնասիրելու պէտք պայթեցաւ Հայաստանի մէջ: Դաշնակցութեան սկսած դաւաճան կոչելու յանձնաժողովի աշխատանքներուն մասնակցած հայերը եւ արտաքին գործոց նախարար Օսկանեանի միջնորոտը սպառնալիքներ ուղղեցին անոնց: Երեւանի կառավարութիւնը պահանջեց, որ յանձնաժողովին հայ անդամները հրաժարին: Կառավարութեան եւ Դաշնակցութեան կուսակցութեան համագործակցութիւնը տուաւ սպասուած արդիւնքը եւ յանձնաժողովը քայքայեցաւ: Նման ակնկալիքները ամբողջովին մը մաս կազմելու Երեւանի չկա-

մութեան պատճառները դժուար չէ կուսել: Հայաստան սերտորէն գործակցելով հայկական Սփիւռքին հետ՝ կը հաւաստէ, թէ Թուրքիոյ դէմ յաղթանակներ կ'արձանագրէ, հետեւաբար չի կրնար հանդուրժել այսպիսի անկախ եւ կարեւոր նախաձեռնութիւն մը, որ կրնայ ղեկը խլել իրմէ: Դաշնակցութեան մասնաւոր, որ «Հայաստան - Սփիւռք Բ. Խորհրդրդաժողովը» տեղի պիտի ունենայ մօտ օրէն, 27-28 Մայիսին: Ըսուեցաւ, որ այս խորհրդաժողովին նպատակն է գնահատել 2000ի ընթացքին արձագրուած յաջողութիւնները Հայ Դատի գծով եւ նոր սպասուածութիւններ որդեգրել նոր յաղորդութիւններու հասցնելու համար:

Այսուհանդերձ, Սեպտեմբեր 11ի ահաբեկչական յարձակումները աղէտաբեր էին թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Հայկական Սփիւռքին համար, որովհետեւ Թուրքիա վերստին դարձաւ Ուաշինկթընի նախընտրած դաշնակիցը եւ, հայկական հարցը մէկդի նետուեցաւ ամերիկացի քաղաքագետներու կողմէ: Անտեսելով այս իրողութիւնը՝ Հայաստան ազդեցիկ քաղաքագետներուն միջոցով է, որ շարունակէ իր հին քաղաքականութիւնը: Թէ՛ Օսկանեան եւ թէ՛ Կիրակոսեան (Ուաշինկթընի մէջ զարգացուած զարգացումները):

ՀՈՑՄԱՆ ԿԸ ՔՈՂԱԶԵՐԾԷ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Գերմանիոյ Քէօլն քաղաքին մէջ Հայկական Յեղապանութեան նուիրուած խորհրդաժողովի մը ընթացքին, պատմաբան Թեա Հոֆմանի ելույթը վերջերս ընդվզում յառաջացուցած է թրքական մամուլին մէջ: Հոֆման Հայկական Յեղապանութեան պատասխանատուները նմանցուցած է նացի գինուորականներուն:

Թրքական մամուլը Հոֆմանի խոսքերը որակած է «գրգռատուութիւն»:

ՆՈՐ ԸՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱԿԻ ՄԷՋ»

Փարիզի մարդկային իրաւունքներու եւ ժողովուրդներու ազատութիւններու միջազգային ատեանին եւ Սելանիկի պոստական «էփէսիոս» միութեան հետ գործակցաբար, յունական «Լորդիոս» հրատարակչատունը վերջերս լոյս ընծայած է վարուժան Աթարեանի «Հայկական Յեղապանութիւնը ՄԱԿի մէջ» գիրքը: Գիրքին յառաջաբանը գրած են Նոպէլեան մրցանակակիրներ Ատոլֆօ Փերս Էսքուիվիլի եւ Միքայիլա Նարալամպիտիս: Գիրքը կ'անդրադառնայ ՄԱԿի մէջ Հայկական Յեղապանութեան ճանաչման քաղաքական եւ դիւանագիտական աշխատանքներուն, ինչպէս նաեւ՝ անպատիժ մնացած ճեղսպանութիւններուն:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԹՈՒՐԲԻԱ ԴԵՄԷ ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՏՄՈՂ «ԱՐԱՐԱՏ» ԺՄՊԱԿԵՆԻՆ

Աղոմ Էկոյեանի «Արարատ» ժապաւեճը կը շարունակէ դժգոհութեան մեծ ալիք բարձրացնել Թուրքիոյ մէջ: Միջազգային մամուլի հեղինակաւոր ներկայացուցիչներէն՝ «Լը Մոնտ» 7 Փետրուարի իր թիւով այս մասին լոյս ընծայած է ակնարկ մը, Պոլսոյ իր թղթակից Նիքոլա Մոնսոյի ստորագրութեամբ: Ակնարկը իր շահեկանութեան համար կու տանք ամբողջութեամբ:

Թուրքիոյ մէջ լարուածութիւնը հետզհետէ աւելի կը բարձրանայ բեմադրիչ Աղոմ Էկոյեանի մը ժապաւեճին՝ «Արարատ»-ին շուրջ: Ժապաւեճը առաջին անգամ ըլլալով կը բեմադրէ քրքական պետութեան կողմէ երբեք չհանցնուած Օսմանեան կայսրութեան արեւելեան Գահագներուն մէջ 1915ին գործուած Հայկական Յեղապանութիւնը:

Այս «նուրը» ճիւղին բեմադրութիւնը սուր հակադարձութիւններու դուռ բացած է Թուրքիոյ մէջ, ուր ժապաւեճը արդէն իսկ երկրորդ «Միտնայթ Էսփրէս» մը կը նկատուի: Էլըն Փարբըրի շուրջ 20 տարի առաջ պատրաստուած նշալ ժապաւեճը հիմնուած իսկական դէպքերու վրայ, կը նկարագրէ քրքական բանտերուն մէջ արգելափակման ծանր պայմանները: «Հայկական Ենթադրեալ ցեղասպանութեան» մասին պատմութեան «անհիշող» նկատուող մէկ մեկնաբանութիւնը ներկայացնելով, ըստ Թուրքիոյ մէջ գործածուող պաշտօնական արտայայտութեան, այս ժապաւեճը տեղական լրատու աղբիւրներու կողմէ կ'ընկալուի իբրեւ հակաթուրք արտայայտութիւն մը, որուն գորավիզ կը կանգնէ «հայկական լուպիները»:

Ժապաւեճին մէջ բազմաթիւ տեսարաններ «գայթակղութիւն» յառաջացուցած են: Վան եւ Կարս քաղաքները, որոնք «վերստեղծուած են» Թուրքիոյ մէջ, կը գտնուին «քրքական Հայաստանի» մը մէջ, որը գոյնէն թիւնը միշտ ալ հերքուած է Թուրքիոյ պաշտօնական պատմութեան կողմէ:

1915ին կեդրոնական եւ արեւելեան Անատոլիոյ մէջ տեղի ունեցած դէպքերուն ներկայացումը նոյնպէս «անհասարակ շիտ» կը նկատուի, որովհետեւ ըստ մամուլին, անկալկանեսէթութիւններու եւ քիւրտներու դէմ կատարուած ջարդերը: Սակայն ամենէն սուր, խիստ ռոնով արտայայտութիւններու դուռ բացած է ժապաւեճին առաջին տեսարանը, ուր ցոյց կը տրուին՝ ցամաքի մը երկայնքին ցիցերու վրայ խրուած հայ մարտիկներու գլուխները:

Անոնք ժապաւեճին մէջ ներկայացուած են իբրեւ հերոսներ, որոնք ի խնդիր հայերու իրաւունքներուն պայքար մղած են: Իսկ քրքական լրատու աղբիւրները զանոնք «անհեթեթիքներ» կը նկատեն: Այն յայտարարութիւնը, թէ ժապաւեճը կրնայ ներկայացուիլ Քանի յառաջիկայ փառատօնին, ուր անկալկ կրնայ համաշխարհային ճանաչում պատկանել, Թուրքիոյ մէջ անհատիւնքաց «օրաշարժ» մը դուռ բացած է:

Պաշտօնական եւ սեփական բազմաթիւ ընկերակցութիւններ բողոքի արշաւի մը ձեռնարկած են, յատկապէս Համացանցին վրայ «Ուրլթ Տիզնի» ընկերութեան ճիւղերէն՝ ամերիկեան «Միքամաք» ընկերութեան վրայ ճնշում բանեցնելու համար, մինչ անկալկ կը պատրաստուի ժապաւեճը յանձնելու Մ. Նահանգներու շարժապատկերի սրահներուն:

Մեծ արգելափակում ունեցող Թուրքիոյ գործարարներու եւ ճարտարաւոնեստի մարզի պատասխանատուներու ընկերակցութիւնը (Թիւ-սիստ) նոյնպէս գործի լծուած է՝ Եւրոպայի եւ Մ. Նահանգներու մէջ լուպիներէ աշխատանքներ տանելով:

Երկրին իշխանութիւնները որոշած են ժապաւեճին առաջին իսկ ցուցադրութեանը ետք զատ բանալի՝ անմիջապէս արգիլելու համար զայն, այն պատճառաբանութեամբ, թէ անկալկ «ատելութեան քարոզչութիւն» կ'ընէ եւ թուրքազգը «կ'անպատկէ»:

Մինչ այդ, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը արդէն իսկ երկու հանգրուաններով միջազգային բողոքի ծրագիր մը մշակած է՝ իր կարգին լրատու աղբիւրներու եւ պատկերասփիւռի ու ձայնասփիւռի «զեքեր» օգտագործելով:

Վաւերական երկու ժապաւեճներու պատրաստութիւնը ընթացքի մէջ է, մէկը կը վերաբերի Օսմանեան կայսրութեան պատմութեան, միւսը՝ հայերուն:

Նպատակը ցոյց տալ է, թէ ցեղասպանութեան ամբաստանութիւնները անհիմն են: Միւս կողմէ, Ապրիլին որմագրներուն արշաւ մը նոյնպէս կ'առաջադրէ հակադարձել հայկական «քարոզչութեան»:

Միջապապի Քեմերու Միայ

«ՇԱՐԼ ԱՉՆԱԻՌԻ ԿԸ ԳԱՆԳԱՂԻ (ԹԵՐԵՒՍ)»

ՅԱՌԱՋԻԿԱՅ ԱՊՐԻԼԻ ԱՆ ԵԼՈՅԹ ՊԻՏԻ ՈՒՆԵԱՅ ԶԱՆԱՍՅԻ ՍԷՋ: «ՏԸ ԹՈՐՈՆԹՕ ՍՍԱՐ» ԹԵՐԹԸ ԿԸ ԳՐԷ ԱՆՈՐ ԱՍՊԱՐԷՋԻՆ ԵՐԿԱՅ ԸԱՆԳՐՈՒԱՆԻՆ ԵՒ ԱՒԱՆԴԻՆ ՄԱՍԻՆ

Արհեստավարժ կեանքի մէջ ընդունւած կարծիք է, որ եթէ մէկը կրնայ հանգստեան կոչել ինքզինք պահանջուած տարիքէն առաջ, ապա առիթ կ'ունենայ սնունդը երկրորդ ասպարէզ մը, որ կրնայ նոյնիսկ աւելի զոհարարել ըլլալ, որովհետեւ տուեալ անձը աւելի յանդուգն կը զգայ տարիներու ընթացքին կատարած իր լաւ աշխատանքին պարգեւած իմաստութեամբ եւ զօրութեամբ:

Շարլ Ազնաւուր համերգային իր «վերջին շրջապտոյտը» կը կատարէ: 77 տարեկանին ան արգէն անցած է իր «սպառուծի» թուականը: Սակայն անոր վերջին շրջապտոյտը իրականութեան մէջ սկսած է Բրիտանիոյ մէջ, աւելի քան մէկ տարի առաջ, իսկ յառաջիկայ Ապրիլին Թորոնթոյի Համիլիկայըտ կեդրոնին մէջ անոր համերգը վերջինը պիտի ըլլայ: Տրամաբխը եւ զգացական շուրջ 1000 երգերու մանրակազմ եւ աւազածուղթի նման կոկորդոմ մեկնարանն ու հեղինակը 1950ական տարիներէն ի վեր տիրական դէմք է Ֆրանսական մշակութային կեանքին մէջ:

«Ասիկա պարզապէս կը նշանակէ, թէ այլեւս տարին 100 համերգ պիտի չտամ աշխարհի տարբեր կողմերը», կ'ըսէ Ազնաւուր: «Համերգներ պիտի տամ, երբ կարելի է ինծի համար, եւ հոն, ուր հանդիսատես կայ»:

Ձայնազօրութեան էՄԻ ընկերութիւնը յառաջիկայ Մարտին պիտի ընկալարակէ Ազնաւուրի ասպարէզը ռեկլամաճոյց երկու ամիսով սկսուածակներ: անոնցմէ մէկը պիտի պարփակէ Ազնաւուրի ամէնէն աւելի սիրուած Ֆրանսերէն երգերը, իսկ միւսը՝ անգլիախոս աշխարհին մէջ տարածուած երգերը:

Այժմ Ազնաւուր երգելէ աւելի ժամանակ կը արամադրէ նոր երգեր յորինելու եւ դերասանութեան: Ամէն տարի ան Ֆրանսական պատկերասփիւռի պատաստին վրայ կը ներկայացընէ կարճ ժապաւէններու շարք մը՝ «Քոլիք» սինդրոմ Ազնաւուր վերնագիրով: վերջին երկու տարիներուն ան հետզհետէ աւելի մեծ թիւով ժապաւէններու մէջ դեր ստանձնելու հրաւեր կը ստանայ:

«Կը սերբմ դերասանութիւնը՝ կ'ըսէ Ազնաւուր: Պատասխանատուութիւն չունիմ անոր մէջ: Պարզապէս պէտք է ներկայանամ եւ հնարազարդ բեմադրիչին»:

Սակայն ան կը խոստովանի, թէ պատասխանատուութիւն կը զգայ բարեխաւար Շարլ Թրենչէն եւ էտիթ Փիաֆէն իր ժառանգած Ֆրանսական երգեցողութեան աւանդութիւնը:

«ԳԱՂԹԱԿԱՆԸ»

«ՏԻ ԻՍԻԿՐԸՍ» ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԹԱՏԵՐԱՄԱՂԸ ՄԵԾ ՆԵԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ԵԱԳՈՒՄՈՎ ԸԱՅ ՂԵԱՄՈՐ ՂԵՐԱՍԱՆՈՒԲԻՆ ԸՍՏԱՐ

Թատերական քննադատ Ճան Մուր «ՏԵՆՎԵՐ Փոսթ» օրաթերթին 20 Յունուար 2002ի թիւին մէջ այս վերնագիրով կը ներկայացնէ «Տի Իմիկրըմ» երաժշտական թատերախաղին գլխաւոր դերակատար Ժապիկ Անթառամեանը, զայն ներկայացնելով իբրեւ Հայկական Յեղասպանութեան գաւազան:

«Հայաստանէն Ամերիկա Ժապիկ Անթառամեանի ուղին սկիզբ առած է 20րդ դարու ամէնէն սարսափելի ողբերգութեանէն: Այն իրողութիւնը, թէ ան հանդիսատեսներու հաճելի ժամանակ կ'պարզէն է այստեղ, ցեղասպանութեան եւ բացարձակ դիպուածի արդիւնք է», կը գրէ Մուր:

Յօդուածագիր հակիրճ պարբերութեան մը մէջ կը պատմէ 24 Ապրիլին հայ մտաւորականներու ձերբակալութեան եւ հազարաւոր հայերու սպանութեան ու ռուսագաղթին մասին: «1914ին շուրջ 5 միլիոն քրիստոնեաներ կը բնակէին իսլամական թուրքերու տարածքին: Այսօր անոնց թիւը միայն 150 հազար է», կը գրէ ան՝ նշելով, որ Անթառամեանի պայքարը ցեղասպանութեան խոյս տուած են դէպի այլ երկրներ: Ան կը մէջբերէ նաեւ երգչուհիին մէկ արտայայտութիւնը. «Սարսափելի այն է, որ ջարդերը երկար ժամանակ ժխտուած են, եւ մինչեւ այսօր թուրքերու պետութիւնը կը ժխտէ գանդը: Ոչ ոք չի ցար, թէ ինչ պատահած է հայերուն»:

Տէնվերի կեդրոնի թատերախումբին անդամներէն Մարք Հարելիք Ամերիկայի մէջ իբրեւ գաղթական հաստատուած իր ընտանիքին պատմութիւնը թատրոնի վերածած է 1984ին: «Տի Իմիկրըմ». Է 25միլիքըմ քառուսյալ պիլիմ» թատերգութեան մէջ ան կը պատմէ իր մեծ հօր Ռուսիայէն թեքուած զաղթին մասին: Հեմիլիքըմի մէջ անոր մեծ հայրը պանան կը ծախէր փողոցներուն մէջ եւ քաղաքին թիակ հրեայ բնակիչն էր:

Թատերգութիւնը 1991ին Միացեալ Նահանգներու տարածքին արհեստավարժ մակարդակի վրայ ամէնէն աւելի ներկայացուած գործը եղած է: Անցեալ Յունուարի կէսերէն

Թրենչի դպրոցին հետեւորդները, ինչպէս՝ Ժաք Պրէյ, որ 1960ական տարիներուն հռչակաւոր էր Ազնաւուրին պէս, Ֆրանսական Ժողովրդային երգերու յատուկ զուարթ ոճը միաձուլած են մտաւորական կշիռի, հեգնանքի, սաղտուկի, բացայայտ արտայայտութեան եւ հզօր ու տարածուն երաժշտութեան հետ, յորինելով երգեր, որոնք կը նկարագրեն սիրոյ եւ մարդկային յարաբերութիւններու խորապէս ողբերգական հոգեբանական անդրադարձները: Բան մը, որ նախապէս անյարմար կը նկատուէր ժողովրդային երաժշտութեան մէջ:

Այս աւանդութեան ծառայելով՝ Ազնաւուր կ'աշխատի ժապաւէնի բնագիրի հեղինակի մը պէս, օրաթերթերը արջէ են անցընելով, սրճարաններու մէջ իր լսած անուղղակի խօսակցութիւնները գրի առնելով, փողոցներուն մէջ անցողիկներուն դէմքերը ուսումնասիրելով, «դիտելով ամէն ինչ, որ կը պատահի աշխարհին մէջ, փնտելով պատմութեան պատահիկները, որոնք կրնան խոր զգացումներ յառաջացնել հոլմեանս մէջ», ինչպէս կը բացատրէ ան: «Այս բաներուն մասին կը մտածեմ երկար ժամանակ, սակայն երբ գրելու ժամանակը դայ, շատ արագ կը յօրինեմ»:

Ազնաւուր այս բեքնիքը գործածած է գրելու համար ցայտուն զաւեչտներ, որոնց տիպարները իր երեւակայութեան ծնունդն են: տառապող հոգիներ, որոնք ապրած են դարաւ, վերջի տպաւորապաշտ գեղանկարիչ Թուրուզ Լոթիքէի ժամանակներուն, որուն նուիրուած երաժշտական թատրոնի մը հեղինակն է ան:

Ազնաւուրի «Լոթիքէ» երաժշտական թատերախաղը սուր քննադատութեան արժանացաւ Ֆրանսայի մէջ եւ խարազանուեցաւ Բրիտանիոյ երաժշտական քննադատներուն կողմէ: «Ինքն իր սեփական հրահանգութեան ժամանակներուն էր», կ'ըսէ Ազնաւուր արհամարհանքով: Թատերախաղը յառաջիկայ Ապրիլին պիտի սկսի ներկայացուիլ Գերմանիոյ մէջ: Ազնաւուր կ'ակնկալէ, որ յառաջիկայ տարի անիկա շարունակուի Պրոտոնէյի մէջ:

Քանի մը բացառութիւններէ զատ, ինչպէս ամէնէն յատկանշականը՝ միջազգային հռչակ վայելող «Տի» երգը, զոր ձայնագրած է 2000ին, «Նորթիլ Էլի» սիրային կատակերգութեան համար, Ազնաւուրի համար պայման է երգել Ֆրանսերէնով: Սակայն ան չընդդիմանար իր երգերուն թարգմանութեան: Ան նաեւ երբեք չի կատարեր ուրիշներուն երգերը: «Ոչ միայն մէկ, այլ երկու երգ յօրինած եմ օրաթերթին մէջ աշխատողներու մասին, կ'ըսէ ան զուարթ եւ կատակելու ոճով: -Առա-

ջինը առօրեայ մամուլի աշխարհին մէջ աշխատելու եւ ճնշումի տակ նիւթ գտնելու մասին է, երկրորդը՝ լրագրողի մը, որ կը բանտարկուի, որովհետեւ կը գրէ իր տեսածին մասին: Ասիկա շատ կարեւոր երգ մըն է»:

Ազնաւուր 1992ին ստանձնած է էտիսիոն Ռաուլ Պրեթոն երաժշտական հրատարակչատունը, ուր պահուած են Թրենչի եւ Փիաֆի գործերուն մեծ մասը, ինչպէս նաեւ՝ փոփ երաժշտութեան Ֆրանսացի վարպետներ Միլընի եւ Ժան Նոհէնի գործերը: Ազնաւուրի նպատակն էր հսկել, որ այս արուեստագէտներուն, ինչպէս նաեւ իր գործերը կուլ չեթթան երաժշտական համաշխարհայնացումին յեղաշրջող ալիքին:

«Կ'ուզեմ երաժշտութեան այս աւանդութիւնը կենդանի պահել, կ'ըսէ Ազնաւուր: Պիտի չուզէի զայն տեսնել ամբարուած համակարգիչներու մէջ եւ իբրեւ օրինակ դրուած ճափոնական քարտրէի մեքենաներու մէջ»:

Ազնաւուր արհեստավարժի իր ներգրուումը կատարած է նեցուկ կանգնելով քեպէքցի երգչուհի Լինտա Լեմէյի, զոր կը կոչէ իր աշակերտը:

«Զայն յայտնաբերեցի Մոնրոյի ճագի փառասունին, թէ եւ ճագը իր բնագաւառը չէր: Ան հրաշալի հեղինակ մըն է: Զայն բերի Ֆրանսա, ուր մէկ գիշերուան մէջ յաջողութիւն արձանագրեց: Այժմ ան երկրպագուներ ունի հոն», կ'ըսէ Ազնաւուր:

Ազնաւուրի երկու մանչերէն մէկը կ'աշխատի Մոնրէյի մէջ՝ իբրեւ կենսաբան: Միւսը երաժշտական գործերու հրատարակիչ է Փարիզի մէջ: Երէջ աղջիկը դերասանուհի ու երգչուհի է եւ մաս կը կազմէ Ազնաւուրի համերգային շրջապտոյտին, իսկ կրտսերը «Կ'երգէ ազգային երգեր եւ մասնագիտացած է հայկական երաժշտութեան մէջ», կ'ըսէ ան հպարտութեամբ:

Իր երգերուն ստեղծած միլիոն համաձայն, ան կ'ըսէ: «Յաւեր կամ զըջումներ չունիմ: Երբ սկսայ երգել, մարդիկ ուրիշ, թէ չէի գիտեր երգել, թէ՛ տղեկ էի ու չէի արիտ հասկնար երգերս: Կը յիշեմ առաջին երոյթներս Քարնելի Հոլի, Վենետիկի, Հոտի եւ Մոնթրէլի մէջ, ուր երգեցի սեփական ոճով եւ լեզուով: Այդ ժամանակ զգացի, թէ երգիչ եմ: Այդ պահը մեծ նշանակութիւն ունէր ինծի համար: Թերեւս նոյն յաճախականութեամբ պիտի չտեսնէք զիս, թերեւս միայն կարճ ժամանակի համար պիտի տեսնէք, սակայն դարձեալ պիտի տեսնէք»:

(ՅԱՊԱՒՈՒՄ)

«ԱՐԱՐԱՏ» ԺԱՊԱՒԻՆԻՆ «ԲԵՄԱԴՐԻԶ»

Քանատական Սի. Թի. Վի. պատկերասփիւռի կայանը 31 Յունուարին հարցազրոյց մը ունեցած է Շարլ Ազնաւուրի հետ՝ իբրեւ «Թայմ» շաբաթաթերթին կողմէ «Դարուն բեմի անձնաւորութիւնը» հռչակուած արուեստագէտը: Պատասխանելով այն հարցումին, թէ իբրեւ հայ իրեն համար ինչ կարեւորութիւն կը ներկայացնէ դեր ստանձնելը Աղոմ էկոյեանի «Արարատ» ժապաւէնին մէջ, որ կը վերաբերի իր ժողովուրդին պատմութեան, Ազնաւուր ըսած է.

«Ինծի համար կարեւոր է, որովհետեւ առաջին անգամ ըլլալով ժապաւէն մը կը պատրաստուի Հայկական Յեղասպանութեան մասին: Անշուշտ ժապաւէնին մէջ մենք չենք տեսներ Յեղասպանութիւնը, բայց շատ կը խօսինք այդ մասին: Ժապաւէնը կը պատկերէ ծագումով հայ բեմադրիչ մը, որ կ'ուզէ ժապաւէն մը պատրաստել իր մօր ապրած Յեղասպանութեան մասին»:

Ազնաւուր երբեք չէ խուսափած նկարագրել իրական եւ կեանքէ առնուած վիճակներ: Զրուցալարը այս մասին կանարկելով հարց տուած է, թէ ինչո՞ւ կարեւոր է, որ մէկը պատմէ անոնց մասին:

«Որովհետեւ նախապէս ոչ ոք պատմած էր, պատասխանած է Ազնաւուր: - Որովհետեւ կը խօսինք մոռցուած Յեղասպանութեան մը մասին, որ այս օրերուն պէտք է ճանաչու՞մ գտնէք»:

Քանատական «Նէշըրլի Փոսթ» թերթը Շարլ Ազնաւուրի յառաջիկայ համերգին առիթով լոյս տեսած յօդուածի մը մէջ կը գրէ, թէ Ազնաւուր էկոյեանի հանդիպած է Մոնրէյի մէջ, ուր ծնած է «հայ ծնողներէ սերած երկու զաւակներու միջեւ գործակցութեան գաղափարը»:

«Էկոյեան ըսաւ, թէ կը փափաքէր ժապաւէն մը պատրաստել հետս, - կը պատմէ Ազնաւուր: - Ըսաւ, թէ պէտք էր միտք մը յղանար: Իրեն խորհուրդ տուի մտածել այդ մասին, եւ ան ստեղծեց հայ բեմադրիչի մը տիպարը, որ ժապաւէն մը կը պատրաստէ իր մօր ապրած Յեղասպանութեան մասին: Բեմադրիչը ես եմ... գէթ այս անգամ»:

«Արարատ» ժապաւէնին նկարահանումը աւարտած է: Անոր առաջին ցուցադրութիւնը հաւանաբար տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիսին, Քանի փառասունին»:

ՃԵՆ ՊԱՍՏԵԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՒ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԺԱՊԱՒԻՆՆԵՐԸ

Ճէն Պալաքեան այս օրերուն կը ծրագրէ ժապաւէնի վերածել իր եղբոր՝ ամերիկահայ բանաստեղծ եւ արձակագիր Փիթըր Պալաքեանի «Պիք տակ աֆ ֆէյք» (ճակատագրի սեւ շուրջ) յուշագրութիւնը: Հեղինակը այս գործին մէջ կը նկարագրէ իր մեծ մօր խորհրդաւոր պատմութիւններուն ընդմէջէն ցեղասպանութեան ենթարկուած իր ժողովուրդին անցեալը յայտնաբերելու եւ օտար միջավայրի մէջ իր արմատները փնտելու փորձառութեան մասին: «Պիք տակ աֆ ֆէյք» արժանացած է գրական մակարդակաւոր «Փէն» մրցանակին: Անոր մասին բազմաթիւ գրախօսականներ հրատարակուած են ամերիկեան մամուլին մէջ:

«Տը Նիւ Եորք Թայմս» օրաթերթը հպանցիկ ձեւով կ'ակնարկէ այս ծրագրին «Փրոֆեսսոր սիգ հըր լայֆ պիքամ Է մուլի» (փրոֆեսսորը կը տեսնէ իր կեանքը ժապաւէնի վերածուած) վերնագիրով յօդուածի մը մէջ, որ կը վերաբերի Պալաքեանի «Էվրիուակ» տիպիքտ» ժապաւէնին նկարահանումին: «Էվրիուակ» տիպիքտ» ժապաւէնը հիմնուած է գրականութեան դասախօսի մը տիպը կեանքին եւ անոր անորոշ ապագային վրայ, - կը գրէ թերթը: - Ան կը քաղաքներուն կ'ուզէ «Ողբական» ու էմըլի Տիլքընզի բանաստեղծութիւնները իրենց կեանքին հետ աւանշելու մարտահրաւերը: Տանթէի «Դոտիքը» կ'եզրափակէ դասը:

«Ամէն ոք դժոխք հասած է կեանքի մէջ իր գործած արարքներուն պատճառով», կը ըսուի 39 տարեկան բեմադրիչը՝ խօսելով իր առաջին ժապաւէնին մասին:

Պալաքեան կը գիտակցի, թէ ժապաւէնին հրատարակումը կրնայ տարակարծութիւններ ստեղծել: Ընկճուածութիւնը շատ տարածուած հոգեբանական վիճակ մըն է եւ շատ ճնշիչ է մարդոց համար: «Վստահ եմ, որ բազմաթիւ հոգեբաններ բացասական կեանքով պիտի հակադրեն ժապաւէնին, սակայն ոմանք համաձայն պիտի գտնուին», կ'ըսէ ան:

«Ժապաւէնին կողմը կը կազմէ կեանքի մէջ ընտրութիւններ կատարելու կարեւորութիւնը», կը բացատրէ Ճէն Պալաքեան: «Ե՞րբ խոյս կու տաս փոթորակից վիճակէ մը եւ կ'ըրբ կը կոչուի ու կը պայքարի»:

Պալաքեան «Էվրիուակ» տիպիքտ» ժապաւէնին բնագիրը գրած է երկու տարի առաջ՝ մասամբ ներշնչուելով իր անձնական կեանքէն, իբրեւ դոկտորայի թեկնածու՝ Քոռնէլ համալսարանին մէջ: Այժմ ան դասախօս է Քին համալսարանին մէջ:

Պատրաստեց՝ Լ. ԿԻՒԼՈՅԵԱՆ-ՄԱՊԱՆԸ



«Տի Իմիկրըմ» երաժշտական թատերախաղին դերակատարները: Աջից՝ Ժապիկ Անթառամեան:

տարած է Տէնվեր կեդրոնին թատերախումբին հետ: «Տի Իմիկրըմ»ի բեմադրիչը՝ Ռանտալ Մայլըր 2000ին զայն հրակրած է դեր ստանձնելու թատերախաղին երաժշտական տարբերակին մէջ: Թէ եւ Անթառամեան չէր տեսած թատերախաղին առաջին ներկայացումը, սակայն Հարելիքի մօր դերը մարմնակերպած էր անոր շարունակութեան՝ «Տը լեկալի» թատերախաղին մէջ:

«Հարելիքի մեծ մայրը կը դիմագրուէր երկուսուր տասնամյակ մը, ան կը մտածէր՝ ինչպէս զաւակներս իբրեւ հրեայ պիտի մեծցնեմ եւ անոնց սորվեցնեմ, որ կարճած մնան իրենց հաւատարմին, այնպիսի վարի մը մէջ, ուր ոչ ոք ինծի նման է: Ինչպէս զաւակիս պիտի սորվեցնեմ, թէ ո՞վ է ինք եւ ուրիշ՝ կու գայ»:


Պատասխանելով Մուրի այն հարցումին, թէ ինչո՞ւ թատերախաղին երաժշտական տարբերակը կը ներկայացուի, երբ անոր առաջին բեմադրութիւնը ինքնին յաջող էր,

Անթառամեան կ'ըսէ. «Թատերախաղը շատ հզօր էր եւ կենսունակ, սակայն կը կարծեմ, որ երաժշտութիւնը նոր կեանք կը ներշնչէ անոր: Ամէն պարզապէս անիկա երգեցիկ է: Երաժշտական թատերախաղը ինքնին իբրեւ բեմական մատուցումն է ձեւ վերամբարձ վարպետները կը պարունակէ: Երբ այլեւս չես կրնար բառերով խօսիլ, կ'երգես, եւ բոլոր գեղեցիկ զգացումները աւելի մեծ ուժգնութեամբ իրենց արտայայտութիւնը կը գտնեն երգի մէջ, քան՝ բառին»:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ՓՈՆԿ ՓՈՆԿ

ԼԻՔԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԻ

Երէկ, Միշէլ Մըրի անուան համալիրին մէջ (Նահր էլ Մոթ) սկսաւ Լիքանանի փինկ փոնկի խմբային ախոյեանութեան մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն 1985ի ծնունդը եւ վեր մարզիկները:

Հ. Մ. Ը. Մ., որ մրցաշարքին իր մասնակցութիւնը կը բերէր երեք խումբերով՝ Անթիլիաս, Պէյրութ եւ Թրիփոլի, լաւ արդիւնք չտուին մասնաւոր Անթիլիաս եւ Թրիփոլի, որոնք երկուքսն ալ պարտութիւններ կրելէ ետք դուրս մնացին մրցաշարքէն:

Պէյրութի կազմը մէկ յաղթանակ արձանագրելէ եւ մէկ պարտութիւն կրելէ ետք, յոյս ունի հասնելու ֆայնլը սիքս, եթէ վաղը յաջողի Բ. Հանգրուանին յաղթանակ մը արձանագրել: Շարաթ օրուան մրցումները կը սկսին ժամը 3:00ին, նոյն վայրին մէջ:

Նշենք, թէ Իւրաքանձիւր սեք կ'աւարտի 11 կէտով: Պէյրութի կազմին Սերուօ Չամիչեան, Հրաչ Հարմանարեան, Մհեր Գնտոյեան եւ Շանթ Սէրայտարեան բաւական տպաւորիչ մրցումներ կատարեցին:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ - Ղազիր	3-0
Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ - Ռիսալի	1-3
Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի - Պիլլոս	2-3
Հ. Մ. Ը. Մ. Թրիփոլի - Մաանի Սայտա	2-3
Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Ժամհուր	0-3
Հ. Մ. Ը. Մ. Անթիլիաս - Մոն Լա Սալ	1-3

«ՓԻՆԿԻԿ» ԵՐԵՒԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ 2002 ԵՂԱՆԱԿԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ախոյեանութեան 2002 եղանակին պատրաստուելու համար, Հայաստանի ախոյեան «Փինկիկ» Երեւան յուրը աշխատանքներ կը տանի այս ուղղութեամբ: Անիկա Փետրուար 14էն Մարտ 5 մասնաւոր փորձեր պիտի կատարէ «Ալպէր Արսթանեան»ի անուան հանրաժանօթ մարզաւանին մէջ: Ապա անիկա իր նախապատրաստական աշխատանքները պիտի տանի Ֆրանսայի մէջ, ուր պիտի կատարէ ֆուտբոլի բարեկամական վեց մրցումներ՝ տեղական խումբերու գէժ, որոնց անուններուն մասին առայժմ ոչինչ կ'ըսուի:

Յաջը յիշատակելի փոփոխութիւններ տեղի ունեցած չեն: Հակառակ անոր, որ արժանիքիցի Տարիս Ալպէրթօ Ռոմանիսի եւ պարագիցի Պրիւսո Պաթիսթա Տա Միլվա փորձերու համար միացան հայրենի կազմին, սակայն անոնք իրենց զիրենք չարդարացնելով վերադարձան իրենց երկիրները:

ՖՈՒԹՊՈՒԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

– ՖՐԱՆՍԱ - ՌՈՒՄԱՆԻԱ՝ 2-1
– ԳԵՐՄԱՆԻԱ ԶԱԽՉԱԽԵՅ ԻՍՐԱՅԷԼԸ՝ 7-1

Ֆուտբոլի միջազգային բարեկամական մրցումի մը ընթացքին, Փարիզի մէջ, աշխարհի եւ եւրոպայի ախոյեան Ֆրանսա 75 հազար համակիրներու ներկայութեան 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ռումանիան: Ա. կիսախաղին, դաշտին տէրերը 2-0 արդիւնքով յառաջացան, շնորհիւ՝ Փաթիսթա Վիլիյորայի (2րդ) եւ Էմանուէլ Փրեթի (27րդ) կողմերէն: Մրցումին աւարտէն մէկ վայրկեան առաջ Իոնէլ Կանչս նշանակեց Ռումանիոյ կողմ:

Այս մրցումէն բացի տեղի ունեցան բարեկամական 16 այլ մրցումներ, որոնց կարգին մեծագոյն յաղթականը եղաւ Գերմանիա, որ Քայլըրլաուժըր-նի մէջ 7-1 արդիւնքով ջախջախեց Իսրայէլը: Միտոս-լաւ Քոլոզ հեթրիք մը իրագործեց (48րդ, 49րդ եւ 64րդ), մինչ մնացեալ կողմը նշանակեցին Տիեթմար Համան (62րդ), Օլիվըր Պիրսոնֆ (69րդ), Ժելարտ Ասամոա (75րդ) եւ Լաս Ռիքըն (79րդ): Ա. կիսախաղին Իսրայէլ 1-0 արդիւնքով յառաջացած էր շնորհիւ՝ Օլիվըր Քանի նշանակած կողմի (27րդ) սխալմամբ իր բերդէն ներս):

Ամսթերտամի մէջ, Հոլանտա 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Անգլիոյ հետ: Փաթիսթա Քոլիկէթը նշանակեց Հոլանտայի կողմ (26րդ), իսկ Տարիս Վասէլ՝ Անգլիոյ կողմ (61րդ):

Ռիստի մէջ, Աճուտական Արարիա 1-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Դանիայէն: Էպէ Աէնտ նշանակեց մրցումին «որը» կողմ (16րդ):

Ստորեւ՝ ֆուտբոլի բարեկամական 17 մրցումներուն արդիւնքները.

Խրուաթիա - Պոլկարիա	0-0
Պելնիք - Նորվեկիա	1-0
Ֆրանսա - Ռումանիա	2-1
Գերմանիա - Իսրայէլ	7-1
Յունաստան - Շուէտ	2-2
Ալբի - Ռուսիա	2-0
Իտալիա - Մ. Նահանգներ	1-0
Լիխթենշթայն - Ֆարո Կղզիներ	0-1
Լուքսամպուրկ - Ալպանիա	0-0
Հոլանտա - Անգլիա	1-1
Հիւսիսային Իրլանտա - Լեհաստան	1-4
Սլովակիա - Փորթուգալ	1-1
Աւստրական Արարիա - Դանիա	0-1
Վալէս - Արժանիք	1-1
Մեքսիք - Ենկուալաիա	1-2
Ուրուկուէյ - Հիւսիսային Քորէա	2-1
Փարակուէյ - Պոլիվիա	2-2

ՉՄԵՌՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ (ՍՈՒԹ ԼԵՅՔ ՍԻԹԻ)

ՆՈՐՎԵԿԻԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՄԵՏԱԼՆԵՐ ԸՆՁԵԼ

Սուր Լէյք Սիթիի մէջ տեղի ունեցող 2002ի Չմենային Ողիմպիական մրցումներուն, Նորվեկիա տիրացաւ իր հինգերորդ ոսկի մետալին, շնորհիւ Օլէ Էյնար Պիոնտալէնի, որ 10 քմ. դահուկարշաւի մրցումներուն, սփրիւթով շահեցաւ ոսկի մետալը: Շարաթաւիկներն ան շահած էր իր առաջին ոսկի մետալը, երբ 20 քմ. անհատական մրցումներուն հանդիսացած էր առաջին:

Շարաթաւիկը շին,



Օլէ Էյնար Պիոնտալէն



Լեո Ճի-Հիու



Սիլըն Օրբօ

ան պիտի փորձէ շահիլ իր երրորդ ոսկի մետալը՝ 12,5 քմ. հալածելու մրցումներուն, նկատի ունենալով, որ այժմ 28 տարեկան նորվեկացին 28,9 երկվայրկեանի առաւելութիւն ունի 2րդ դիրքը գրաւող գերմանացի Սվէն Ֆիշըրի վրայ, որ պիտի փորձէ անուսուպի արժաք մետալին տիրանալ:

մետալին: Պրոնկ մետալին տիրացաւ պուլկարացի Էւկենիա Ռասնովա:

Տղոց 10 քմ. քրոսքաունթրիի հեծելարշաւի մրցումներուն, Հայաստանէն Արամ Հաճիեան չկրցաւ փայլուն արդիւնք արձանագրել եւ գրաւեց 74րդ դիրքը (85 մասնակցողներուն մէջ):

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը.

ՈՍԿԻ ԱՐԾ.	ՊՐ.
1.- Նորվեկիա	5
2.- Գերմանիա	4
3.- Մ. Նահանգներ	3
4.- Ֆինլանտա	2
5.- Իտալիա	2
6.- Ջուիցերիա	2
7.- Ռուսիա	1
8.- Աւստրիա	1
9.- Ֆրանսա	1
10.- Հար. Եորէա	1
10.- Հոլանտա	1
12.- Եսթոնիա	1
13.- Սլովակիա	1
14.- Էստոնիա	0
14.- Լեհաստան	0
17.- Շուէտ	0
18.- Պոլկարիա	0
18.- Չինաստան	0
18.- Չեխիա	0

ԸԱԶԱՖԻԻ ՈՐԴԻՆ ՓՈՐՁԵՐ ԿԸ ԿԱՏԱՐԵ ԵՆՈՒՎԵՆԹՈՒՄԻ ՀԵՏ

Ենուկենթուսի պատասխանատուները շարաթաւիկներին յայտնեցին, թէ Լիպիոյ նախագահ Մուամմար Քադաֆիի գաւազը Այ Սաատի խումբին հիմնական մարզիկներուն հետ փորձերու կը մասնակցի:

28 տարեկան լիպիացին, որ Ենուկենթուսի համակիր մըն է, իր փորձերուն սկսու աւելումին պատուով նախագահին՝ Ճիաննի Անիէլլիի հետ ճաշելէ ետք: Մինչ ան փորձեր կը կատարէր յետսպանի Զիրո Ֆերրարիի հետ, անդին մարզիչ Մարսելո Լիփի յատուկ ուշադրութիւն կը դարձնէր անոր:

Այ Սաատի, որ մաս կը կազմէ Լիպիոյ ֆուտբոլի ազգային խումբին, երկու տարի առաջ չլայողեցաւ իր մասնակցութիւնը բերել «Վալիսիոյ» ֆերու-ճիայի հետ:

ՌՈՒՄԱՆԱՅԻ ՎԵԼԻՍԻԻ ՊԱՏՃՈՒԵՑԱԻ

Ռումանիոյ կոփամարտի ֆետերասիտները երէկ յայտնեց, թէ երկու տարիով կախակայեց աշխարհի ախոյեանութեան մրցումներուն արժաք մետալ շահած Մարիան Վելիսիւն, որ անցեալ տարի Պրիսպանի մէջ տեղի ունեցած բարեկամեցողութեան խաղերուն խթանիչ դերը գործածած էր:

«Անոր պատիժը կը սկսի 5 Սեպտեմբեր 2001էն սկսեալ, այսինքն՝ ճիշդ այն օրը, որ ան իր սխալը գործած էր», կը յայտնէ Ռումանիոյ կոփամարտի ֆետերասիտներ փոխ նախագահ Ռիւտել Օպրետա:

24 տարեկան Մարիան, որ Պելֆասթի մէջ տեղի ունեցած 2001ի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն 48 քմ. դասակարգին մէջ շահած էր արժաք մետալ մը, այսպիսով կը դառնայ ուսումնասիրող առաջին կոփամարտը, որ խթանիչ դերը կը գործածէ: Ան կ'ըսէ, թէ մտադիր է իր դատը պաշտպանել:

15 ՄԱՐՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵՒՐՕ-2004Ի ԳԾՈՎ

Մարտ 15ին, Աթէնքի մէջ (Յունաստան) տեղի պիտի ունենայ Եւրօ-2004ի մրցաշարքին Հայաստանի մաս կազմած խմբակին (Չ. խմբակ) խումբերուն ներկայացուցիչներուն միջեւ հանդիպում մը, որուն ընթացքին անոնք պիտի փորձեն համաձայնութիւն գոյացնել գաղտնի մրցումներուն գծով, ճշդելու համար յայտագիրը:

Հայաստանի ֆուտբոլի ֆետերասիտներ ընդհանուր քարտուղար Արման Յովհաննիսեան, որ ներկայ էր Եւրօ-2004ի մրցաշարքին վիճակագրութեան, յայտնեց, որ եթէ անոնք չկարենան համաձայնիլ, Եւրօ-2004. Ան ինք կ'որոշէ մրցումներուն յայտագիրը:

Նշենք, թէ Եւրոպայի նախորդ ախոյեանութեան, անոնք չէին կրցած համաձայնիլ:

Հայաստանի խմբակին մաս կը կազմեն՝ Սպանիա Ուրբանիա, Հիւսիսային Իրլանտա եւ Յունաստան:

ԷՆ. ՊԻ. ԷՅ. ՊԱՔՍ ԴԱՐՁԵԱԼ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ

ԷՆ. ՊԻ. Էյ.ի երէկուան մրցումներուն, հիւրընկալ բոլոր խումբերն ալ յաղթանակներ արձանագրեցին, բացի՝ Միլուոքի Պաքսէն, որ իր դաշտին վրայ 115-107 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր շրջանին (Կեղրոնական) նախափորձին դիրքը գրաւող Քլիվլէնտ Քալիֆօրնի: Պարագլուխի դիրքը գրաւող Պաքս քանի մը օր առաջ կրած էր այլ պարտութիւն մը, ներկայիս ԷՆ. ՊԻ. Էյ.ի ամէնէն տկար խումբէն՝ Շիքաքո Պուլլ-զէն, 96-92 արդիւնքով:

Միջարեւմտեան գոտիի 2րդ դիրքը գրաւող Մինեսոթա Վուլվը 107-92 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆիօնիքս Սանգր: Յաղթական կազմին մարզիկներէն Քեւին Կառնէթ, որ նշանակեց 33 կէտ, 13 ռիպաուցտ եւ 6 էսիսք, մրցումէն ետք Մինեսոթայի առաջին տարւ համակիրներուն խմբին դրամը ինք վճարեց:

Նիւ Եորքի մէջ, Թորոնթօ Ռեփթըր 89-82 արդիւնքով պարտութիւն մը կրեց դաշտին տէրերէն՝ Նիքսէն: Ռեփթըրզէն կը բացակայէին՝ Վինս Քարթըր, Հաքիմ Օլաճուտ, Տիլ Բրի եւ Ժորժ Ուիլիամս:

Պոսթըն Սելթիքս 92-75 արդիւնքով պարտուած հեռացաւ Կոլորադ Սթըյթ Ուորիորզի դաշտէն, հակառակ անոր որ Փոլ Փրիք եւ Անթոնիոս Ուոլթըր յաջորդաբար նշանակեցին 30 եւ 13 կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Շարլոթ Հոնդէթց - Շիքաքո Պուլլ	113-91
Մայնի Էիք - Օրլանտո Մէթր	112-95
Նիւ Եորք Նիքս - Թորոնթօ Ռեփթըր	89-82
Քլիվլէնտ Քալիֆօրն - Միլուոքի Պաքս	115-107
Միլուոքի Պաքս - Ֆիօնիքս Սանգ	107-92
Փորթլենտ Պիլթրիք - Տալաս Մալլըրիքս	114-103

Կոլորադ Սթըյթ Ուորիորզ - Պոսթըն Սելթիքս 92-75

ԴԱՍԱՒՈՐՈՒՄ

●ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ ԱՏԼԱՆՏԵԱՆ ԳՕՏԻ

Յաղթ. Պարտ.	
Նիւ Ճըրքի Նեքց	32
Պոսթըն Սելթիքս	29
Ուաշինգթըն Ուիլիամս	26
Օրլանտո Մէթր	26
Ֆիլադելֆիա Սիքսըրզ	25
Նիւ Եորք Նիքս	20
Մայնիք Էիք	19

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ

Միլուոքի Պաքս	28	20
Թորոնթօ Ռեփթըր	29	23
Տիքսոնիք Փիլթըրզ	26	22
Ինտիանա Փէյլըրզ	25	26
Շարլոթ Հոնդէթց	24	25
Աթլանտա Հոքս	17	33
Քլիվլէնտ Քալիֆօրն	17	33
Շիքաքո Պուլլ	12	37

●ՍՈՐԵՒՍԵԱՆ ՇՐՋԱՆ ՄԵՋԱՐԵՒՄՏԵԱՆ ԳՕՏԻ

Տալաս Մալլըրիքս	36	15
Միլուոքի Վուլվը	34	16
Սան Անթոնիո Սփըրզ	31	18
Եւրօ Ճէք	26	24
Հիւսթըն Ռոքեթց	17	33
Տեքսաս Նալէթց	14	32
Մեմֆիս Կրիկիթ	14	36

ԽԱՂԱՂԱԿԱՆ ԳՕՏԻ

Սաքրամենթօ Քիլկլ	38	12
Լոս Անջելըս Լէյքըրզ	34	13
Փորթլենտ Քլիֆօրն Պիլթրիք	26	23
Սիլթըր Սուփըրսոնիքս	25	24
Ֆիօնիքս Սանգ	25	25
Լոս Անջելըս Քլիվլըրզ	25	26
Կոլորադ Սթըյթ Ուորիորզ	15	32

●ՍՈՐԵՒՍԵՆ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

Եւրօ Ճէք - Ֆիլադելֆիա Սիքսըրզ
Տիքսոնիք Փիլթըրզ - Նիւ Ճըրքի Նեքց
Տեքսաս Նալէթց - Մեմֆիս Կրիկիթ
Ուաշինգթըն Ուիլիամս - Սաքրամենթօ Քիլկլ
Լոս Անջելըս Լէյքըրզ - Սիլթըր Սուփըրսոնիքս
Սան Անթոնիո Սփըրզ - Լոս Անջելըս Քիլկլ

